# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՅՈԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ
2025 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 28-Ի
ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 11-Լ

«28» փետրվարի 2025թ. ք. Էջմիածին

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՅՈԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 28-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի և 57-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով.
**Համայնքի ավագանին**

## ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ավագանու յոթերորդ նստաշրջանի 2025 թվականի փետրվարի 28-ի արտահերթ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| Հ/Հ Ազգանուն Անուն | Կողմ | Դեմ | Ձեռնպահ | Հ/Հ Ազգանուն Անուն | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1. Արսեն Պետրոսյան | | | | 8. Գոհար Նիկողոսյան | | | |
| 2. Նաիրա Բասենցյան | | | | 9. Աննա Կիրակոսյան | | | |
| 3. Գևորգ Ղազարյան | | | | 10. Աղասի Բաղդասարյան | | | |
| 4. Լիլիթ Միրզախանյան | | | | 11. Մնակ Խաչատրյան | | | |
| 5. Ներսես Մելիքյան | | | | 12. Վահրամ Ղարիբջանյան | | | |
| 6. Վարդան Գրիգորյան | | | | 13. Էդգար Թամազյան | | | |
| 7. Կարեն Մովսիսյան | | | | 14. Արմեն Դավթյան | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՓՈԽԱՐԻՆՈՂ,
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ

*ՀԱՎԵԼՎԱԾ*
*Վաղարշապատ համայնքի ավագանու*
*Յոթերորդ նստաշրջանի*
*2025 թվականի փետրվարի 28-ի*
*Արտահերթ նիստի թիվ 11-Լ որոշման*

# ՕՐԱԿԱՐԳ
# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՎԱՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԻՐԱԶԵԿՈՒՄՆԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻ ՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔ ԵՎ (ԿԱՄ) ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆՆԵՐԻ ՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 8-Ի ԹԻՎ 40 ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՀԱՎԵԼՎԱԾԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի ԹԻՎ 113-Լ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՀԱՎԵԼՎԱԾ ԹԻՎ 2-Ի ԵՎ ԹԻՎ 7-Ի ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

5. ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

6. ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

7. ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

8. ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

9. ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

10. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ 6 ՄԻԿՐՈՌԵԳԻՈՆԱԼ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ՀԱՏԱԿԱԳԾԵՐՈՒՄ ԳՈՏԵՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ ՄՇԱԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

11. ԻՐԱԿԱՆԱՑՐԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ԵՎ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ ՎԵՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

12. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՅՈԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՓՈԽԱՐԻՆՈՂ,
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ

# ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 12-Լ

«28» փետրվարի 2025թ. ք.Էջմիածին

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՎԱՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԻՐԱԶԵԿՈՒՄՆԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻ ՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի և 36-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, 57-րդ հոդվածի 2-րդ մասի, «Հավաքների ազատության մասին» օրենքի 15-րդ հոդվածի պահանջներով՝

**Համայնքի ավագանին**

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաստատել՝

1) Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքում հանրային հավաքների մասին իրազեկումների գրանցամատյանի վարման կարգը՝ համաձայն N 1 հավելվածի։

2) Համայնքում հանրային հավաքների մասին իրազեկումների գրանցամատյանի ձևը՝ համաձայն N 2 հավելվածի։

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդ օրվանից։

| Հ/Հ Ազգանուն Անուն | Կողմ | Դեմ | Ձեռնպահ | Հ/Հ Ազգանուն Անուն | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1. Արսեն Պետրոսյան | | | | 8. Գոհար Նիկողոսյան | | | |
| 2. Նաիրա Բասենցյան | | | | 9. Աննա Կիրակոսյան | | | |
| 3. Գևորգ Ղազարյան | | | | 10. Աղասի Բաղդասարյան | | | |
| 4. Լիլիթ Միրզախանյան | | | | 11. Սևակ Խաչատրյան | | | |
| 5. Ներսես Մելիքյան | | | | 12. Վահրամ Ղարիբջանյան | | | |
| 6. Վարդան Գրիգորյան | | | | 13. Էդգար Թամազյան | | | |
| 7. Կարեն Մովսիսյան | | | | 14. Արմեն Զաքարյան | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԱՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ,
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Հավելված 1
Հաստատված է
Վաղարշապատ համայնքի ավագանու
«28» փետրվարի 2025 թվականի
Թիվ 12-Լ որոշմամբ

# Կ Ա Ր Գ
# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՎԱՔՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԻՐԱԶԵԿՈՒՄՆԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻ ՎԱՐՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են Վաղարշապատ համայնքում հանրային հավաքներ անցկացնելու իրազեկումների գրանցամատյանի **(այսուհետ՝ գրանցամատյան)** վարման հետ կապված հարաբերությունները:

2. Գրանցամատյանը համայնքի վարչական տարածքում հավաքներ անցկացնելու վերաբերյալ «Հավաքների ազատության մասին» օրենքով սահմանված կարգով Վաղարշապատ համայնքի ղեկավարին (այսուհետ՝ լիազոր մարմին) ներկայացրած գրանցված իրազեկումների վերաբերյալ և լիազոր մարմնի կամ նրա լիազորած անձի կողմից ձեռնարկված քայլերի մասին տեղեկությունների ամբողջականությունն է:

3.Գրանցամատյանը խիստ հաշվառման հատուկ մատյան է, տպագրվում է մեկ օրինակից, վարվում է թղթային տարբերակով:

4. Գրանցամատյանի պահպանումը և վարման պարտականություններ իրականացվում է լիազոր մարմնի կողմից լիազորած անձի պատասխանատվությամբ և այն պետք է սահմանված լինի համապատասխան իրավական ակտով (որոշում, կարգադրություն):

5. Գրանցամատյանը կարում, էջերը հերթական համարակալմամբ համարակալում, վերջին էջում էջերի քանակը՝ տառերով և թվով, այն կազմելու օրը, ամիսը, տարին նշում և ստորագրությամբ և կնիքով վավերացնում է՝ համայնքի աշխատակազմի քարտուղարը:

6. Հանրային հավաքներ անցկացնելու մասին լիազոր մարմնին ներկայացված իրազեկումները անհապաղ գրանցվում են գրանցամատյանում՝ ըստ դրանք ստանալու հերթականության: Մուտքագրման համարը գրառվում է նաև ներկայացված իրազեկման փաստաթղթի վրա: Յուրաքանչյուր տարվա գրանցումների համարակալումը կատարվում են տարեսկզբից: Յուրաքանչյուր օրացուցային տարվա համար համարակալումը սկսվում է 1-ից:

7. Գրանցամատյանը ըստ սյունակների լրացվում է հետևյալ ձևով՝

1) 1-ին սյունակում թվերով գրառվում է իրազեկման մուտքագրման հերթական համարը.

2) 2-րդ սյունակում գրառվում է հավաքի անցկացման մասին իրազեկումը լիազոր մարմնի աշխատակազմում մուտքագրելու օրը, ամիսը, տարեթիվը, ժամը.

3) 3-րդ սյունակում գրառվում է իրազեկման ներկայացման ձևը՝ գրավոր՝ անձամբ կամ փոստով.

4) 4-րդ սյունակում գրառվում է հավաքի կազմակերպչի (կազմակերպիչների) և ղեկավարի տվյալները՝ անձնագրի կամ անձը հաստատող այլ փաստաթղթի տվյալները, հեռախոսահամարները, փոստային և էլեկտրոնային հասցեները.

5) 5-րդ սյունակում գրառվում է հավաքի տեսակը՝ հավաք կամ երթ կամ հավաք և երթ.

6) 6-րդ սյունակում գրառվում է հավաքի վայրը.

7) 7-րդ սյունակում գրառվում է հավաքի, սկզբի և ավարտի մոտավոր ժամանակը.

8) 8-րդ սյունակում գրառվում է հավաքի նպատակը.

9) 9-րդ սյունակում գրառվում է մասնակիցների սպասվող թիվը.

10) 10-րդ սյունակում գրառվում է երթի ուղին և ժամանակացույցը, եթե նախատեսված է երթի անցկացում, այլապես անհրաժեշտ է կատարել գծանշում.

11) 11-րդ սյունակում գրառվում են՝ հավաքի անցկացման ժամանակ օգտագործվելիք առարկաների կամ տեխնիկական միջոցների (պաստառներ, ջահեր, բարձրախոսներ և այլն), կարգադրիչների նախատեսվող թվի, վարձակալությամբ տրված տարածքներում վարձակալի համաձայնության, իրավաբանական անձի կողմից հավաք կազմակերպվելու դեպքում՝ իրավաբանական անձի ղեկավար մարմնի կամ կառավարման մարմնի որոշման վերաբերյալ և այլ տեղեկությունները.

12) 12-րդ սյունակում գրառվում է ներկայացված իրազեկման պատճենը լիազոր մարմնի նստավայրում բոլորի համար մատչելի ու տեսանելի տեղում փակցնելու օրը, ամիսը, տարեթիվը, ժամը.

13) 13-րդ սյունակում գրառվում է ներկայացված իրազեկման պատճենը համայնքի համացանցային կայքէջում տեղադրելու օրը, ամիսը, տարեթիվը.

14) 14-րդ սյունակում գրառվում է լիազոր մարմնի կողմից հավաքի անցկացման վերաբերյալ կարծիք ստանալու նպատակով ՀՀ ոստիկանությանը ուղարկված իրազեկման գրության համարը, օրը, ամիսը, տարեթիվը, ժամը.

15) 15-րդ սյունակում գրառվում է լիազոր մարմնի կողմից հավաքի անցկացման վերաբերյալ կարծիք ստանալու նպատակով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը ուղարկված իրազեկման գրության համարը, օրը, ամիսը, տարեթիվը, ժամը, եթե նախատեսված է հավաքը անցկացնել պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների, թանգարանների ու գրադարանների տարածքում կամ դրանց անմիջական հարևանությամբ նախատեսված վայրում, այլապես անհրաժեշտ է սյունակում կատարել գծանշում.

16) 16-րդ սյունակում գրառվում է հավաքի անցկացման վերաբերյալ ՀՀ ոստիկանությունից ստացված կարծիքը, գրության համարը, օրը, ամիսը, տարեթիվը, ժամը.

17) 17-րդ սյունակում գրառվում է հավաքի անցկացման վերաբերյալ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունից ստացված կարծիքը, գրության համարը, օրը, ամիսը, տարեթիվը, ժամը, եթե լիազոր մարմինը հավաքի անցկացման վերաբերյալ կարծիք ստանալու նպատակով դիմել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը, այլապես անհրաժեշտ է սյունակում կատարել գծանշում.

18) 18-րդ սյունակում գրառվում է լիազոր մարմնի կողմից իրազեկման քննարկման օրը, ամիսը, տարեթիվը.

19) 19-րդ սյունակում գրառվում է լիազոր մարմնի կողմից հավաքի անցկացման վերաբերյալ լսումներ անցկացնելու օրը, ամիսը, տարեթիվը.

20) 20-րդ սյունակում գրառվում է հավաք անցկացնելու մասին լիազոր մարմնի կողմից իրազեկման վերաբերյալ ընդունված որոշման համարը, օրը, ամիսը, տարեթիվը, բովանդակությունը.

21) 21-րդ սյունակում գրառվում է լիազոր մարմնի կողմից իրազեկման վերաբերյալ ընդունված որոշման մասին հավաքի կազմակերպիչներին տեղեկացնելու օրը, ամիսը, տարեթիվը.

22) 22-րդ սյունակում գրառվում է լիազոր մարմնի կողմից իրազեկման վերաբերյալ ընդունված որոշումը հավաքի կազմակերպիչներին հանձնելու ձևը (պատվիրված փոստով՝ ստանալու մասին ծանուցմամբ կամ կազմակերպչին՝ առձեռն հանձնելու միջոցով), օրը, ամիսը, տարեթիվը.

23) 23-րդ սյունակում գրառվում է լիազոր մարմնի կողմից իրազեկման վերաբերյալ ընդունված որոշման մասին ՀՀ ոստիկանությանը տեղեկացնելու օրը, ամիսը, տարեթիվը, ժամը.

24) 24-րդ սյունակում գրառվում է լիազոր մարմնի կողմից իրազեկման վերաբերյալ ընդունված որոշման մասին գրությունը լիազոր մարմնի նստավայրում բոլորի համար մատչելի ու տեսանելի տեղում փակցնելու օրը, ամիսը, տարեթիվը.

25) 25-րդ սյունակում գրառվում է լիազոր մարմնի կողմից իրազեկման վերաբերյալ ընդունված որոշումը համայնքի համացանցային կայքէջում տեղադրելու օրը, ամիսը, տարեթիվը.

26) 26-րդ սյունակում գրառվում է այո կամ ոչ՝ լիազոր մարմնի կողմից իրազեկման վերաբերյալ ընդունված որոշումը դատական կարգով բողոքարկելու մասին.

27) 27-րդ սյունակում գրառվում է դատարանի վճռի համարը, օրը, ամիսը, տարեթիվը, հակիրճ բովանդակությունը, եթե լիազոր մարմնի կողմից իրազեկման վերաբերյալ ընդունված որոշումը դատական կարգով բողոքարկվել է, այլապես անհրաժեշտ է սյունակում կատարել գծանշում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ,
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Հավելված 2
Հաստատված է
Վաղարշապատ համայնքի ավագանու
«28» փետրվարի 2025 թվականի
Թիվ 12-Ն որոշմամբ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՎԱՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԻՐԱԶԵԿՈՒՄՆԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻ ՁԵՎ

ՍԿՍՎԱԾ Է՝ ________________
(օրը, ամիսը, տարին)
ԱՎԱՐՏՎԱԾ Է՝ ________________
(օրը, ամիսը, տարին)

## Հավաքի անցկացման ներկայացված իրազեկման և հավաքի վերաբերյալ տեղեկություններ

| N Հ/հ | Հավաքի անցկացման մասին իրազեկումը լիազոր մարմնի աշխատակազմում մուտքագրելու օրը, ամիսը, տարեթիվը, ժամը | Իրազեկումը ներկայացնելու ձևը | Հավաքի կազմակերպչի (կազմակերպիչների) և ղեկավարի տվյալները | Հավաքի տեսակը | Հավաքի վայրը | Հավաքի սկզբի և ավարտի մոտավոր ժամանակը | Հավաքի նպատակը | Մասնակիցների սպասվող թիվը | Երթի ուղին և ժամանակացույցը | Լրացուցիչ տեղեկություններ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 |
| 2 | | | | | | | | | | |
| 3 | | | | | | | | | | |
| 4 | | | | | | | | | | |
| 5 | | | | | | | | | | |

## Հավաքի անցկացման մասին հանրությանը տեղեկացնելու և պետական մարմիններից հավաքի անցկացման վերաբերյալ ստացված կարծիքների մասին տեղեկություններ

| Ներկայացված իրազեկման պատճենը լիազոր մարմնի նստավայրում բոլորի համար մատչելի ու տեսանելի տեղում փակցնելու օրը, ամիսը, տարեթիվը, ժամը | Ներկայացված իրազեկման պատճենը համայնքի համացանցային կայքէջում տեղադրելու օրը, ամիսը, տարեթիվը | Լիազոր մարմնի կողմից հավաքի անցկացման վերաբերյալ կարծիք ստանալու նպատակով ՀՀ ոստիկանությանը ուղարկված իրազեկման գրության համարը, օրը, ամիսը, տարեթիվը, ժամը | Լիազոր մարմնի կողմից հավաքի անցկացման վերաբերյալ կարծիք ստանալու նպատակով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը ուղարկված իրազեկման գրության համարը, օրը, ամիսը, տարեթիվը, ժամը | Հավաքի անցկացման վերաբերյալ ՀՀ ոստիկանությունից ստացված կարծիքը, գրության համարը, օրը, ամիսը, տարեթիվը, ժամը | Հավաքի անցկացման վերաբերյալ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունից ստացված կարծիքը, գրության համարը, օրը, ամիսը, տարեթիվը, ժամը | Լիազոր մարմնի կողմից իրազեկման քննարկման օրը, ամիսը, տարեթիվը | Լիազոր մարմնի կողմից հավաքի անցկացման վերաբերյալ լսումներ անցկացնելու օրը, ամիսը, տարեթիվը |
|---|---|---|---|---|---|---|---|
| 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |

| Հավաք անցկացնելու մասին լիազոր մարմնի կողմից իրազեկման վերաբերյալ ընդունված որոշման վերաբերյալ տեղեկություններ | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Հավաք անցկացնելու մասին լիազոր մարմնի կողմից իրազեկման վերաբերյալ ընդունված որոշման համարը, օրը, ամիսը, տարեթիվը, բովանդակությունը | Լիազոր մարմնի կողմից իրազեկման վերաբերյալ ընդունված որոշման մասին հավաքի կազմակերպիչներին տեղեկացնելու օրը, ամիսը, տարեթիվը | Լիազոր մարմնի կողմից իրազեկման վերաբերյալ ընդունված որոշումը հավաքի կազմակերպիչների և հանձնելու ձևը, օրը, ամիսը, տարեթիվը | Լիազոր մարմնի կողմից իրազեկման վերաբերյալ ընդունված որոշման մասին ՀՀ ոստիկանությանը տեղեկացնելու օրը, ամիսը, տարեթիվը, ժամը | Լիազոր մարմնի կողմից իրազեկման վերաբերյալ ընդունված որոշման մասին գրությունը լիազոր մարմնի նստավայրում բոլորի համար մատչելի ու տեսանելի տեղում փակցնելու օրը, ամիսը, տարեթիվը | Լիազոր մարմնի կողմից իրազեկման վերաբերյալ ընդունված որոշումը համայնքի համացանցային կայքէջում տեղադրելու օրը, ամիսը, տարեթիվը | Լիազոր մարմնի կողմից իրազեկման վերաբերյալ ընդունված որոշումը բողոքարկվե՞լ է դատական կարգով | Դատարանի վճռի համարը, օրը, ամիսը, տարեթիվը, հակիրճ բովանդակությունը |
| 20 | 21 | 22 | 23 | 24 | 25 | 26 | 27 |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |

Գրանցամատյանը կարված է, բաղկացած է՝ _______ _______________ էջից։
(թվով) (տառերով)

Գրանցամատյանը կազմվել է՝ _______________ ։
(օրը, ամիսը, տարին)

Համայնքի աշխատակազմի

քարտուղար՝ _______________ _______________
Կ.Տ (ստորագրություն) (անուն, ազգանուն)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ,
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ - ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
«ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՎԱՔՆԵՐ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԻՐԱԶԵԿՈՒՄՆԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻ ՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Վաղարշապատ համայնքի ավագանու քննարկմանը ներկայացվող «Համայնքում հանրային հավաքների մասին իրազեկումների գրանցամատյանի վարման կարգը և ձևը հաստատելու մասին» որոշման նախագիծը մշակվել է «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի և 36-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, «Հավաքների ազատության մասին» օրենքի 15-րդ հոդվածի պահանջների կարգավորումների համատեքստում:

**Իրավական ակտի ընդունման նպատակը և կարգավորման անհրաժեշտությունը.**

«Հավաքների ազատության մասին» օրենքի 15-րդ հոդվածով սահմանված է, որ հանրային հավաքներ անցկացնելու մասին իրազեկումների գրանցամատյանի վարման կարգն ու ձևը հաստատում է համայնքի ավագանին՝ նպատակ հետապնդելով կանոնակարգել հանրային հավաքների մասին իրազեկումների թափանցիկությունն ու հավաստիությունը:

Ելնելով վերոգրյալից համայնքի ավագանու քննարկմանն է ներկայացվում «Համայնքում հանրային հավաքներ անցկացնելու մասին իրազեկումների գրանցամատյանի վարման կարգը և ձևը հաստատելու մասին» ավագանու որոշման նախագիծը:

**Իրավական ակտի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտության մասին.**

Ավագանու որոշման նախագծի ընդունումն այլ իրավական ակտերի ընդունման կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջացնում:

**Իրավական ակտի ընդունման կապակցությամբ բյուջեում եկամուտների և ծախսերի ավելացման կամ նվազեցման մասին.**

Ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ համայնքի բյուջեում ծախսերի և եկամուտների էական ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում:

**Նախագծով առաջարկվող կարգավորումների բնույթն ու նպատակը.**

Նախագիծը կրում է ներքին (լոկալ) բնույթ, քանի որ պարունակում է վարքագծի կանոն այն անձանց խմբի համար, որոնք ակտն ընդունող մարմնի հետ աշխատանքային հարաբերությունների մեջ են կամ օգտվում են դա ընդունող մարմնի ծառայություններից կամ աշխատանքներից, և ուղղված է համայնքում հանրային հավաքների մասին իրազեկումների գրանցամատյանի վարման կարգը հաստատելուն: Կարգի ընդունումը նպատակ է հետապնդում համայնքի աշխատակազմի մակարդակում կարգավորելու հանրային հավաքների մասին իրազեկումների հուսալի և ապահով շրջանառությունը:

**Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը.**

Նախագծի ընդունման արդյունքում ակնկալվում է գործող օրենսդրությամբ նախատեսված պահանջներին համապատասխան ապահովել համայնքում հանրային հավաքների մասին իրազեկումների գործընթացները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԱԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ,
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ

# ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 13-Լ

«28» փետրվարի 2025թ. | ք.Էջմիածին

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔ ԵՎ (ԿԱՄ) ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆՆԵՐԻ ՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 4-րդ հոդվածով և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջին տեղակալի առաջարկությունը՝

**Համայնքի ավագանին**

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքում տեղական տուրք և (կամ) տեղական վճար վճարողների հաշվառման և գրանցամատյանների վարման կարգը՝ համաձայն հավելվածի։

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից։

| Հ/Հ Ազգանուն Անուն | Կողմ | Դեմ | Ձեռնպահ | Հ/Հ Ազգանուն Անուն | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1. Արսեն Պետրոսյան | | | | 8. Գոհար Նիկողոսյան | | | |
| 2. Նաիրա Բասենցյան | | | | 9. Աննա Կիրակոսյան | | | |
| 3. Գևորգ Ղազարյան | | | | 10. Աղասի Բաղդասարյան | | | |
| 4. Լիլիթ Միրզախանյան | | | | 11. Սևակ Խաչատրյան | | | |
| 5. Ներսես Մելիքյան | | | | 12. Վահրամ Ղարիբջանյան | | | |
| 6. Վարդան Գրիգորյան | | | | 13. Էդգար Թամազյան | | | |
| 7. Կարեն Մովսիսյան | | | | 14. Արմեն Դավթյան | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԱՌԻՆ ՓՈԽԱՐԵՆՈՂ,
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Հավելված
Հաստատված է
Վաղարշապատ համայնքի ավագանու
«28» փետրվարի 2025 թվականի
Թիվ 13-Լ որոշմամբ

# Կ Ա Ր Գ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔ ԵՎ (ԿԱՄ) ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆՆԵՐԻ ՎԱՐՄԱՆ

1. Սույն կարգով սահմանվում են Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքում (այսուհետ՝ համայնք) տեղական տուրք և (կամ) վճար վճարողների հաշվառման, գրանցամատյանների վարման կարգը և գրանցամատյանների ձևերը:

2. Տեղական տուրք և (կամ) վճար վճարողների հաշվառումն իրականացվում է տեղական տուրք և (կամ) վճար վճարողների գրանցամատյաններում (այսուհետ՝ գրանցամատյան), որոնք վարվում են ըստ տեղական տուրքերի և վճարների առանձին տեսակների:

3. Գրանցամատյանները դասակարգվում են՝

1) տեղական տուրք վճարող ֆիզիկական անձանց հաշվառման գրանցամատյաններ (Ձև 1),

2) տեղական վճար վճարող ֆիզիկական անձանց հաշվառման գրանցամատյաններ (Ձև 2),

3) տեղական տուրք վճարող իրավանաբական անձանց և անհատ ձեռնարկատերերի հաշվառման գրանցամատյաններ (Ձև 3),

4) տեղական վճար վճարող իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի հաշվառման գրանցամատյաններ (Ձև 4):

4. Գրանցամատյանները վարվում են Վաղարշապատի համայնքապետարանի աշխատակազմի (այսուհետ՝ աշխատակազմ) համապատասխան ոլորտի բաժիններում՝ բաժիների պետերի պատասխանատվությամբ:

5. Գրանցամատյանները վարվում են ըստ տարիների:

6. Տեղական տուրք և (կամ) վճար վճարողների գրանցամատյանները կարող են լինել փաստաթղթային կամ էլեկտրոնային (համակարգչային ծրագրի կամ ինտերնետային կայքի տեսքով) ձևով:

7. Փաստաթղթային ձևով վարվող գրանցամատյանները էջակալվում, կարվում և կնքվում են աշխատակազմի կնիքով:

8. Գրանցամատյաններում առնվազն պետք է ներառվեն հետևյալ տվյալները՝

1) գրանցամատյանի վարման տարեթիվը,

2) տեղական տուրքի և (կամ) վճարի տեսակը,

3) գրանցամատյանը վարող աշխատակազմի համապատասխան բաժնի անվանումը,

4) գրանցամատյանի վարման համար պատասխանատու անձի անուն, ազգանունը, ստորագրությունը,

5) տեղական տուրք և (կամ) վճար վճարողների գրանցման հերթական համարը,

6) համայնքի ղեկավարի որոշման համարը և ամսաթիվը, որի հիման վրա գանձվել է տուրք և (կամ) վճար (լրացվում է առկայության դեպքում),

7) տեղական տուրքի և (կամ) վճարի չափը,

8) ժամանակահատվածը, որի համար վճարվել է տեղական տուրք և (կամ) վճար,

9) տեղական տուրք և (կամ) վճար վճարող ֆիզիկական անձնաց դեպքում գրանցամատյաններում (Ձև 1, Ձև 2) ներառվում են նաև՝

ա. ֆիզիկական անձի անունը, ազգանունը (տվյալ լինելու դեպքում՝ հայրանունը),

բ. հաշվառման հասցեն,

գ. անձը հաստատող փաստաթղթերի տվյալները.

10) տեղական տուրք և (կամ) վճար վճարող իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերի դեպքում գրանցամատյաններում (Ձև 3, Ձև 4) ներառվում են նաև՝

ա. իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ անվանումը, կազմակերպաիրավական տեսակը,

բ. գրանցման հասցեն,

գ. գործունեության հասցեն,

դ. հարկ վճարողի հաշվառման համարը.

9. Տվյալ տարվա համար փաստաթղթային ձևով վարված գրանցամատյանները ստորագրվում են համապատասխան բաժնի պետի կողմից և մինչև հաջորդ տարվա մարտի 1-ը հանձնվում են աշխատակազմի արխիվ, իսկ էլեկտրոնային վարման դեպքում արխիվացվում են կրիչի վրա և հանձնվում աշխատակազմին:

10. Գրանցամատյանները կարող են վարվել նաև այն համայնքային ոչ առևտրային կազմակերպություններում (ՀՈԱԿ) և բյուջետային հիմնարկներում (ԲՀ), որտեղ գանձվում է տեղական տուրք և (կամ) տեղական վճար:

11. ՀՈԱԿ-ներում և ԲՀ-ներում տվյալ տարվա համար փաստաթղթային ձևով վարվող գրանցամատյանները ստորագրվում են տնօրենի և (կամ) հիմնարկի ղեկավարի կողմից, կնիքի առկայության դեպքում նաև կնիքվում, իսկ էլեկտրոնային վարման դեպքում արխիվացվում են կրիչի վրա և մինչև հաջորդ տարվա մարտի 1-ը հանձնվում են աշխատակազմին:

12. Գրանցամատյանների Ձև 1-ը, Ձև 2-ը, Ձև 3-ը և Ձև 4-ը կցվում են:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԱՅԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ,
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ　　　　　　　　　　Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Ձև 1

# ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆ

## ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔ ՎՃԱՐՈՂ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ

«____» _________ 20___թ.

1. Տեղական տուրքի տեսակը՝ ______________________
2. Գրանցամատյանը վարող աշխատակազմի համապատասխան բաժնի անվանումը՝ ______________________
3. Գրանցամատյանի վարման համար պատասխանատու անձի անունը, ազգանունը, ստորագրությունը՝ ______________________

| ՀՀ | Տեղական տուրք վճարող ֆիզիկական անձանց | | | | | Հայտի ներկայացման ամսաթիվ | Վճարման | | Համայնքի ղեկավարի որոշման | | Թույլտվության | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ազգանունը | Անունը | Հայրանունը | Անձը հաստատող փաստաթղթի համարը | Հաշվառման հասցեն | | Ամսաթիվը | Գումարը (ՀՀ դրամ) | N | Ամսաթիվը | N | Ժամանակահատվածը |
| 1 | | | | | | | | | | | | |
| 2 | | | | | | | | | | | | |
| 3 | | | | | | | | | | | | |
| 4 | | | | | | | | | | | | |
| 5 | | | | | | | | | | | | |
| 6 | | | | | | | | | | | | |
| 7 | | | | | | | | | | | | |
| 8 | | | | | | | | | | | | |
| 9 | | | | | | | | | | | | |
| 10 | | | | | | | | | | | | |

Ձև 2

# ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆ

## ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐ ՎՃԱՐՈՂ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ

«____» ________ 20___թ.

1. Տեղական տուրքի տեսակը՝ ____________________
2. Գրանցամատյանը վարող աշխատակազմի համապատասխան բաժնի անվանումը՝ ____________________
3. Գրանցամատյանի վարման համար պատասխանատու անձի անունը, ազգանունը, ստորագրությունը՝ ____________________

| ՀՀ | Տեղական վճար վճարող ֆիզիկական անձանց | | | | | Հայտի ներկայացման ամսաթիվ | Վճարման | | Համայնքի ղեկավարի որոշման | | Թույլտվության | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ազգանունը | Անունը | Հայրանունը | Անձը հաստատող փաստաթղթի համարը | Հաշվառման հասցեն | | Ամսաթիվը | Գումարը (ՀՀ դրամ) | N | Ամսաթիվը | N | Ժամանակահատվածը |
| 1 | | | | | | | | | | | | |
| 2 | | | | | | | | | | | | |
| 3 | | | | | | | | | | | | |
| 4 | | | | | | | | | | | | |
| 5 | | | | | | | | | | | | |
| 6 | | | | | | | | | | | | |
| 7 | | | | | | | | | | | | |
| 8 | | | | | | | | | | | | |
| 9 | | | | | | | | | | | | |
| 10 | | | | | | | | | | | | |

Ձև 3

# ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆ

## ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔ ՎՃԱՐՈՂ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ

«____» _________ 20___թ.

1. Տեղական տուրքի տեսակը՝ ____________________
2. Գրանցամատյանը վարող աշխատակազմի համապատասխան բաժնի անվանումը՝ ____________________
3. Գրանցամատյանի վարման համար պատասխանատու անձի անունը, ազգանունը, ստորագրությունը՝ ____________________

| ՀՀ | Տեղական տուրք վճարող իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի | | | Հասցե | | Հայտի ներկայացման ամսաթիվ | Վճարման | | Համայնքի ղեկավարի որոշման | | Թույլտվության | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Անվանումը | Կազմակերպական-իրավական տեսակը | Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) | Գրանցման հասցեն | Գործունեության հասցեն | | Ամսաթիվը | Գումարը (ՀՀ դրամ) | N | Ամսաթիվը | N | Ժամանակահատվածը |
| 1 | | | | | | | | | | | | |
| 2 | | | | | | | | | | | | |
| 3 | | | | | | | | | | | | |
| 4 | | | | | | | | | | | | |
| 5 | | | | | | | | | | | | |
| 6 | | | | | | | | | | | | |
| 7 | | | | | | | | | | | | |
| 8 | | | | | | | | | | | | |
| 9 | | | | | | | | | | | | |
| 10 | | | | | | | | | | | | |

Ձև 4

# ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆ

## ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐ ՎՃԱՐՈՂ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ

«____» _________ 20___թ.

1. Տեղական վճարի տեսակը՝ ____________________
2. Գրանցամատյանը վարող աշխատակազմի համապատասխան բաժնի անվանումը՝ ____________________
3. Գրանցամատյանի վարման համար պատասխանատու անձի անունը, ազգանունը, ստորագրությունը՝ ____________________

| ՀՀ | Տեղական վճար վճարող իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի | | | Հասցե | | Հայտի ներկայացման ամսաթիվ | Վճարման | | Համայնքի ղեկավարի որոշման | | Թույլտվության | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Անվանումը | Կազմակերպաիրավական տեսակը | Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) | Գրանցման հասցեն | Գործունեության հասցեն | | Ամսաթիվը | Գումարը (ՀՀ դրամ) | N | Ամսաթիվը | N | Ժամանակահատվածը |
| 1 | | | | | | | | | | | | |
| 2 | | | | | | | | | | | | |
| 3 | | | | | | | | | | | | |
| 4 | | | | | | | | | | | | |
| 5 | | | | | | | | | | | | |
| 6 | | | | | | | | | | | | |
| 7 | | | | | | | | | | | | |
| 8 | | | | | | | | | | | | |
| 9 | | | | | | | | | | | | |
| 10 | | | | | | | | | | | | |

## ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
## ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

### ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 14-Լ

«28» փետրվարի 2025թ. ք.Էջմիածին

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 8-Ի ԹԻՎ 40 ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՀԱՎԵԼՎԱԾԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի և 33-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 57-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով ու հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջին տեղակալի առաջարկությունը՝

**Համայնքի ավագանին**

### ՈՐՈՇՈՒՄ Է

1. Վաղարշապատ համայնքի ավագանու 2022 թվականի փետրվարի 8-ի «Վաղարշապատ համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունված նորմատիվ իրավական ակտերի հաշվառման և պահպանման կարգը հաստատելու մասին» թիվ 40 որոշման 1-ին կետով ընդունված կարգը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| Հ/Հ Ազգանուն Անուն | Կողմ | Դեմ | Ձեռնպահ | Հ/Հ Ազգանուն Անուն | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1. Արսեն Պետրոսյան | | | | 9. Աննա Կիրակոսյան | | | |
| 2. Նաիրա Բաղեյան | | | | 10. Աղասի Բաղդասարյան | | | |
| 3. Գևորգ Ղազարյան | | | | 11. Սևակ Խաչատրյան | | | |
| 4. Լիլիթ Միրզախանյան | | | | 12. Վահրամ Ղարիբջանյան | | | |
| 5. Ներսես Մելիքյան | | | | 13. Նորայր Օհանյան | | | |
| 6. Վարդան Գրիգորյան | | | | 14. Էդգար Թամազյան | | | |
| 7. Կարեն Մովսիսյան | | | | 15. Արմեն Դավթյան | | | |
| 8. Գոհար Նիկողոսյան | | | | | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԱՅԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ,
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Հավելված
Հաստատված է
Վաղարշապատ համայնքի ավագանու
«28.» փետրվարի 2025 թվականի
*Թիվ 14-Ն որոշմամբ*

# ԿԱՐԳ
# ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունված նորմատիվ իրավական ակտերի հաշվառման և պահպանման հետ կապված հարաբերությունները:

2. Վաղարշապատ համայնքի աշխատակազմը պարտավոր է պահել տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունված նորմատիվ իրավական ակտերի հաշվառման մատյաններ կամ միասնական մատյան (այսուհետ՝ մատյան): Մատյանը կարող է վարվել ինչպես թղթային, այնպես էլ էլեկտրոնային տարբերակով:

3. Մատյանում ըստ հերթականության լրացվում են՝

1) նորմատիվ իրավական ակտի հաշվառման հերթական համարը.
2) նորմատիվ իրավական ակտն ընդունող մարմինը.
3) նորմատիվ իրավական ակտի տեսակը.
4) նորմատիվ իրավական ակտի վերնագիրը.
5) նորմատիվ իրավական ակտի ընդունման տարին, ամիսը (տառերով), ամսաթիվը.
6) նորմատիվ իրավական ակտի հերթական համարը.
7) նորմատիվ իրավական ակտի ստորագրման տարին, ամիսը (տառերով), ամսաթիվը.
8) նորմատիվ իրավական ակտի հրապարակման, դրա ուժի մեջ մտնելու տարին, ամիսը (տառերով), ամսաթիվը.
9) նորմատիվ իրավական ակտի գործողության դադարեցման տարին, ամիսը (տառերով), ամսաթիվը:
10) նորմատիվ իրավական ակտի նախագիծը պետական-իրավական փորձաքննության ուղարկելու տարին, ամիսը (տառերով), ամսաթիվը,
11) նորմատիվ իրավական ակտի նախագծի մասին պետական-իրավական փորձագիտական եզրակացություն տալու տարին, ամիսը (տառերով), ամսաթիվը, իսկ օրենքով սահմանված ժամկետներում փորձագիտական եզրակացություն չտրամադրելու դեպքում՝ նշում այդ մասին:

4.Պետական-իրավական փորձաքննության ոչ ենթակա համայնքային բյուջեների վերաբաշխման, դրանում առաջարկվող փոփոխությունների, ինչպես նաև բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների վերաբերյալ համայնքի ավագանու կողմից ընդունված նորմատիվ իրավական ակտերը մատյանում հաշվառելիս սույն կարգի 3-րդ կետի 10-րդ և 11-րդ ենթակետերով պահանջվող տեղեկատվությունը չի նշվում:

5. Մատյաններում կարող են նախատեսվել նաև այլ նշումներ:

6. Մատյանի հաշվառման համարների հերթականությունը վերսկսվում է յուրաքանչյուր տարվա հունվարի 1-ից:

7.Մատյանում նշումները պետք է կատարվեն առանց կրճատումների:

8. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունված նորմատիվ իրավական ակտերը հաշվառվում, այնուհետև սահմանված կարգով արխիվացվում և պահպանվում են համայնքի աշխատակազմի արխիվում, իսկ սահմանված ժամկետների ավարտից հետո մշտական պահպանության է հանձնվում պետական կամ համայնքային արխիվ:

9. Սույն կարգը տարածվում է նաև տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունված ներքին (լոկալ) և անհատական իրավական ակտերի հաշվառման և պահպանման վրա:

10. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունված նորմատիվ իրավական ակտերի հաշվառման մատյանից տեղեկություններ կարող են տրամադրվել իրավաբանական և ֆիզիկական անձանց: Մատյանից գրավոր տեղեկություններ կարող են տրվել առձեռն, փոստով, ինչպես նաև էլեկտրոնային կապի այլ միջոցներով:

11. Մատյանից տեղեկություններ տալու համար համայնքի ավագանու որոշմամբ սահմանված կարգով և չափով կարող է գանձվել տեղական վճար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ,
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ

# ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 15-Լ

«28» փետրվարի 2025թ. ք.Էջմիածին

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի ԹԻՎ 113-Լ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՀԱՎԵԼՎԱԾ ԹԻՎ 2-Ի ԵՎ ԹԻՎ 7-Ի ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, 34-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետերով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով աշխատակազմի տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմի պատասխանատու Գ.Պողոսյանի և աշխատակազմի կրթության և մշակույթի պետ Լ.Հակոբյանի զեկուցագրերը ու համայնքի ղեկավարի առաջին տեղակալի առաջարկությունը՝

**Համայնքի ավագանին**

## ՈՐՈՇՈՒՄ Է

1. Վաղարշապատ համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 25-ի «Վաղարշապատի համայնքապետարանի աշխատակազմի և ենթակա կառույցների 2025 թվականի կառուցվածքը, աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 113-Լ որոշմամբ հաստատված թիվ 2 հավելվածի մեջ կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները՝ «Աշխատակազմի տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմ» մասում «Օպերատոր-մոնտաժի մասնագետ» հատվածում սահմանված՝ «168000» դրույքաչափը և աշխատավարձի ֆոնդը փոփոխել «200000»-ի, նույն մասի, ընդամենը տողում՝ աշխատավարձի ֆոնդ «5028000» թիվը փոփոխել «5060000»-ի և ընդհանուր հավելվածի ընդամենը տողում սահմանված՝ ընդամենը՝ աշխատավարձի ֆոնդ «25387749» թիվը փոփոխել «25419749»-ի:

2. Վաղարշապատ համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 25-ի «Վաղարշապատի համայնքապետարանի աշխատակազմի և ենթակա կառույցների 2025 թվականի կառուցվածքը, աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 113-Լ որոշմամբ հաստատված թիվ 7 հավելվածի մեջ կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները՝

1) Աշխատակիցների քանակը կետում «40» փոփոխել «41»-ի:

2) «Տնօրենի տեղակալ ուսումնական գծով մեթոդիստ» հատվածում սահմանված՝ միավոր «1» փոփոխել «1,25»-ի, «205000» աշխատավարձի ֆոնդը փոփոխել «256250»-ի:

3) «Երաժշտության դաստիարակ» հաստվածում սահմանված՝ միավոր «2,5» փոփոխել «2,75»-ի, «335000» աշխատավարձի ֆոնդը փոփոխել «368500»-ի:

4) ընդհանուր հավելվածի ընդամենը տողում սահմանված՝ «42,52» միավորը փոփոխել «43,02»-ի, ընդամենը՝ աշխատավարձի ֆոնդ «5 549 500» թիվը փոփոխել «5 634 250»-ի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| Հ/Հ Ազգանուն Անուն | Կողմ | Դեմ | Ձեռնպահ | Հ/Հ Ազգանուն Անուն | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1. Արսեն Պետրոսյան | | | | 9. Աննա Կիրակոսյան | | | |
| 2. Նաիրա Բասենցյան | | | | 10. Աղասի Բաղդասարյան | | | |
| 3. Գևորգ Ղազարյան | | | | 11. Սևակ Խաչատրյան | | | |
| 4. Լիլիթ Միրզախանյան | | | | 12. Վահրամ Ղարիբջանյան | | | |
| 5. Ներսես Մելիքյան | | | | 13. Նորայր Օհանյան | | | |
| 6. Վարդան Գրիգորյան | | | | 14. Էդգար Թամազյան | | | |
| 7. Կարեն Մովսիսյան | | | | 15. Արմեն Դավթյան | | | |
| 8. Գոհար Նիկողոսյան | | | | | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԱՅԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ,
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՆԱԽԱԳԻԾ
ՀԱՎԵԼՎԱԾ 2
Հաստատված է ՀՀ Արմավիրի մարզի
Վաղարշապատ համայնքի
ավագանու 25.12.2024թ.
Թիվ 113-Ն որոշմամբ
Փոփոխությունը հաստատված է ՀՀ Արմավիրի մարզի
Վաղարշապատ համայնքի ավագանու
28.02.2025թ. թիվ 15-Ն որոշմամբ

# 2025 թվականի Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վաղարշապատի համայնքապետարանի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

1. Աշխատակիցների քանակը 105

2. Հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

| Հ/Հ | Հաստիքը | Միավոր | Դրույքաչափ | Աշխատավարձի ֆոնդ |
|---|---|---|---|---|
| Քաղաքական և հայեցողական պաշտոններ | | | | |
| 1 | Համայնքի ղեկավար | 1 | 590000 | 590000 |
| 2 | Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ | 1 | 480000 | 480000 |
| 3 | Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 | 480000 | 480000 |
| 4 | Համայնքի ղեկավարի խորհրդական | 2 | 415000 | 830000 |
| 5 | Համայնքի ղեկավարի օգնական | 2 | 384000 | 768000 |
| 6 | Համայնքի ղեկավարի մամուլի քարտուղար | 1 | 366000 | 366000 |
| Ընդամենը | | 8 | | 3514000 |
| Համայնքային վարչական պաշտոններ | | | | |
| 1 | Ոսկեհատ բնակավայրի վարչական ղեկավար | 1 | 415000 | 415000 |
| Ընդամենը | | 1 | | 415000 |
| Համայնքային ծառայության պաշտոններ | | | | |
| Աշխատակազմ | | | | |
| 1 | Աշխատակազմի քարտուղար | 1 | 480000 | 480000 |
| 2 | Գլխավոր մասնագետ | 2 | 285000 | 570000 |
| 3 | Գլխավոր մասնագետ-տնտեսական ծրագրերի պատասխանատու | 1 | 285000 | 285000 |
| 4 | Առաջատար մասնագետ | 2 | 216000 | 432000 |
| Ընդամենը | | 6 | | 1767000 |
| Քաղաքաշինության և հողաշինության բաժին | | | | |
| 1 | Բաժնի պետ | 1 | 415000 | 415000 |
| 2 | Բաժնի պետի տեղակալ | 1 | 350000 | 350000 |
| 3 | Գլխավոր մասնագետ | 5 | 285000 | 1425000 |
| 4 | Առաջատար մասնագետ | 5 | 216000 | 1080000 |
| Ընդամենը | | 12 | | 3270000 |
| Ֆինանսատնտեսագիտական բաժին | | | | |
| 1 | Բաժնի պետ | 1 | 415000 | 415000 |
| 2 | Բաժնի պետի տեղակալ-գլխավոր հաշվապահ | 1 | 350000 | 350000 |
| 3 | Գլխավոր մասնագետ | 2 | 285000 | 570000 |
| 4 | Առաջատար մասնագետ | 2 | 216000 | 432000 |
| 5 | 1-ին կարգի մասնագետ | 2 | 200000 | 400000 |
| Ընդամենը | | 8 | | 2167000 |
| Եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժին | | | | |
| 1 | Բաժնի պետ | 1 | 415000 | 415000 |
| 2 | Բաժնի պետի տեղակալ | 1 | 350000 | 350000 |
| 3 | Գլխավոր մասնագետ | 1 | 285000 | 285000 |
| 4 | Առաջատար մասնագետ | 1 | 216000 | 216000 |
| 5 | 1-ին կարգի մասնագետ | 9 | 200000 | 1800000 |
| Ընդամենը | | 13 | | 3066000 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Իրավաբանական բաժին | | | | |
| 1 | Բաժնի պետ | 1 | 415000 | 415000 |
| 2 | Բաժնի պետի տեղակալ | 1 | 350000 | 350000 |
| 3 | Գլխավոր մասնագետ(պատվիրակված լիազորություններ իրականացնող) | 1 | 186583 | 186583 |
| 4 | Գլխավոր մասնագետ | 1 | 285000 | 285000 |
| 5 | Առաջատար մասնագետ (պատվիրակված լիազորություններ իրականացնող) | 2 | 156583 | 313166 |
| 6 | Առաջատար մասնագետ | 2 | 216000 | 432000 |
| 7 | 1-ին կարգի մասնագետ | 2 | 200000 | 400000 |
| Ընդամենը | | 10 | | 2381749 |
| Կրթության և մշակույթի բաժին | | | | |
| 1 | Բաժնի պետ | 1 | 415000 | 415000 |
| 2 | Գլխավոր մասնագետ | 1 | 285000 | 285000 |
| 3 | Առաջատար մասնագետ | 2 | 216000 | 432000 |
| 4 | 1-ին կարգի մասնագետ | 3 | 200000 | 600000 |
| Ընդամենը | | 7 | | 1732000 |
| Քարտուղարության բաժին | | | | |
| 1 | Բաժնի պետ | 1 | 415000 | 415000 |
| 2 | Առաջատար մասնագետ (Ոսկեհատ բնակավայրի օպերատոր) | 1 | 216000 | 216000 |
| 3 | Առաջատար մասնագետ | 3 | 216000 | 648000 |
| 4 | 1-ին կարգի մասնագետ | 3 | 200000 | 600000 |
| 5 | 2-րդ կարգի մասնագետ (Ոսկեհատ բնակավայր) | 1 | 168000 | 168000 |
| Ընդամենը | | 9 | | 2047000 |
| Աշխատակազմի տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմ | | | | |
| 1 | Տեխնիկական սպասարկման պատասխանատու | 1 | 415000 | 415000 |
| 2 | Տնտեսվար | 1 | 192000 | 192000 |
| 3 | Փորձագետ | 1 | 200000 | 200000 |
| 4 | Փորձագետ | 1 | 168000 | 168000 |
| 5 | Գործավար | 4 | 168000 | 672000 |
| 6 | Օպերատոր-նկարահանող մասնագետ | 1 | 200000 | 200000 |
| 7 | Օպերատոր- մոնտաժի մասնագետ | 1 | 200000 | 200000 |
| 8 | Վարորդ | 1 | 300000 | 300000 |
| 9 | Վարորդ | 1 | 144000 | 144000 |
| 10 | Սանտեխնիկ-հյուսն | 1 | 192000 | 192000 |
| 11 | Էլեկտրիկ | 1 | 192000 | 192000 |
| 12 | Անվտանգության հսկիչ | 3 | 150000 | 450000 |
| 13 | Բանվոր-ներկարար | 1 | 187000 | 187000 |
| 14 | Հյուսն | 1 | 115000 | 115000 |
| 15 | Բանվոր | 1 | 168000 | 168000 |
| 16 | Հավաքարար | 9 | 115000 | 1035000 |
| 17 | Պահակ | 2 | 115000 | 230000 |
| Ընդամենը | | 31 | | 5060000 |
| Ընդամենը | | 105 | | 25419749 |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՓՈԽԱՐԻՆՈՂ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՔԱՂՎԱԾՔ
ՀԱՎԵԼՎԱԾ 7
Հաստատված է ՀՀ Արմավիրի մարզի
Վաղարշապատ համայնքի
ավագանու 25.12.2024թ.
թիվ 113-Լ որոշմամբ
Փոփոխությունը հաստատված է ՀՀ Արմավիրի մարզի
Վաղարշապատ համայնքի ավագանու
16.01.2025թ. թիվ 5-Լ որոշմամբ
Փոփոխությունը հաստատված է ՀՀ Արմավիրի մարզի
Վաղարշապատ համայնքի ավագանու
28.02.2025թ. թիվ 15-Լ որոշմամբ

2025թ. համար Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի ՎՎաղարշապատի համայնքապետարանի թիվ 3 <<Ծիծեռնակ>> մսուր-մանկապարտեզ ՀՈԱԿ-ի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

1. Աշխատակիցների քանակը 41
2. Հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

| հ/հ | Հաստիքը | միավոր | դրույքաչափ | Աշխատավարձի ֆոնդ |
|---|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1 | 300000 | 300000 |
| 2 | Տնօրենի տեղակալ ուսումնական գծով՝ մեթոդիստ. | 1,25 | 205000 | 256250 |
| 3 | Գլխավոր հաշվապահ | 1 | 205000 | 205000 |
| 4 | Կրտսեր 1-ին խմբի դաստիարակ | 2,8 | 181000 | 362000 |
| 5 | Դաստիարակ | 10,53 | 151000 | 1359000 |
| 6 | Հերթապահ դաստիարակ | 0,59 | 151000 | 75500 |
| 7 | Հատուկ մանկավարժ | 1 | 159000 | 159000 |
| 8 | Երաժշտութ. դաստիարակ | 2,75 | 134000 | 368500 |
| 9 | Ֆիզկուլտուրայի հրահանգիչ | 1,5 | 134000 | 201000 |
| 10 | Բուժքույր | 1 | 115000 | 115000 |
| 11 | Տնտեսվար | 1 | 115000 | 115000 |
| 12 | Խոհարար | 2 | 115000 | 230000 |
| 13 | Խոհարարի օգնական | 1 | 115000 | 115000 |
| 14 | Կրտսեր 1-ին խմբի դաստիարակի օգնական | 2,6 | 149000 | 298000 |
| 15 | Դաստիարակի օգնական | 9 | 115000 | 1035000 |
| 16 | Դռնապահ, հավաքարար | 2 | 110000 | 220000 |
| 17 | Պահակ | 2 | 110000 | 220000 |
| Ընդամենը | | 43,02 | | 5 634 250 |

Դաստիարակների դրույքաչափը սահմանված է <<1,17>> կրտսեր 1-ին խմբի դաստիարակների դրույքաչափը սահմանված է <<1,4>>, կրտսեր 1-ին խմբի դաստիարակի օգնական դրույքաչափը սահմանված է << 1,3>>՝ համաձայն ՀՀ կառավարության 15 հուլիսի 2021 թվականի N 1169-Ն որոշմամբ սահմանված կարգով և 29 սեպտեմբերի 2022 թվականի N 1485-Ն որոշմամբ սահմանված կարգով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԴԻԱՆԱ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ

Հարգելի՛ տիկին Գասպարյան,

Հայտնում ենք Ձեզ, որ համայնքապետարանի թիվ 3 «Ծիծեռնակ» մսուր-մանկապարտեզ ՀՈԱԿ-ում մարտի 1-ից նախատեսվող խմբասենյակի բացմամբ պայմանավորված՝ անհրաժեշտություն է առաջացել հաստիքացուցակում կատարել փոփոխություն և ավելացնել 0,25 միավոր երաժշտության դաստիարակի և 0,25 միավոր մեթոդիստի հաստիքներ՝ համաձայն ՀՀ ԿԳՄՍ նախարարի 21.02.2022 թ. 09-Ն հրամանի: Խնդրում ենք Ձեր թույլտվությունը՝ ապահովելու ընթացակարգը:

Հարգանքով՝

Կրթության և մշակույթի բաժնի պետ՝ Լ. Հակոբյան

14.02.2025 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՀՀ, 1101, ք.Էջմիածին, Սբ. Մ. Մաշտոցի 0
Հեռ. +374 (231) 53663
Էլ. փոստ: info@ejmiatsin.am

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРСКИЙ МАРЗ
МЭРИЯ
ГОРОДА ВАГАРШАПАТ
РА, 1101, г. Эчмиадзин, ул. Св. М. Маштоца 0
Тел.: +374 (231) 53663
Эл.почта: info@ejmiatsin.am

REPUBLIC OF ARMENIA, ARMAVIR MARZ, MUNICIPALITY OF VAGHARSHAPAT
Address: 0 St. M. Mashtots Str., 1101, Ejmiatsin, RA, Tel. +374 (231) 53663, E-mail: info@ejmiatsin.am

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԻԱՆԱ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄՆ
ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԳՈՌ ՊՈՂՈՍՅԱՆԻՑ

## ԶԵԿՈՒՅՑԱԳԻՐ

Հարգելի՛ տիկին Գասպարյան,

Ձեր հաստատմանն եմ ներկայացնում համայնքապետարանի տեխնիկական սպասարկումն իրականացնող անձնակազմի օպերատոր-մոնտաժի մասնագետ Արմենակ Մանուկյանի աշխատավարձը վերանայելու հարցը: Վերջինս բարեխղճորեն եւ հավուր պատշաճի կատարում է իրեն վերապահված աշխատանքը, ըստ անհրաժեշտության փոխարինում է նաեւ օպերատոր-լուսանկարահանող մասնագետ Դավիթ Տերտերյանին: Հաշվի առնելով վերը նշված հանգամանքները, խնդրում եմ տալ Ձեր համաձայնությունը եւ կատարել համապատասխան հանձնարարականներ՝ Արմենակ Մանուկյանի աշխատավարձը բարձրացնելու եւ հավասարեցնելու օպերատոր-լուսանկարահանող մասնագետի աշխատավարձին:

Հարգանքով՝ Գ. Պողոսյան

31.01.2025թ.

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 16-Ա

«28» փետրվարի 2025թ. ք.Էջմիածին

## ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14.3-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 29.12.2011թ. թիվ 1920-Ն որոշմամբ և հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 22.12.2009թ. թիվ 1064-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի 22.01.2025թ. թիվ 2/փ-24 դրական եզրակացությունն ու համայնքի ղեկավարի առաջին տեղակալի առաջարկությունը՝

**Համայնքի ավագանին**

## ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաստատել ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի գլխավոր հատակագծի փոփոխությունը:

2. ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի վարչական տարածքում գտնվող «Լուսինե-Կիլիկիա» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող 04-002-0874-0001 կադաստրային ծածկագրով 0,8474 հա մակերեսով հողամասը՝ բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման նպատակով, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական օբյեկտների նպատակային նշանակության, արդյունաբերական օբյեկտների գործառնական նշանակության հողերից փոփոխել բնակավայրերի նպատակային նշանակության՝ բնակելի կառուցապատման գործառնական նշանակության:

3. Հողամասի նպատակային նշանակության փոփոխությունը ընդգրկել համայնքի հողային ֆոնդի տարեկան ընթացիկ հաշվեկշռում:

4. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով արտացոլել սույն որոշումից բխող դրույթների փոփոխությունը ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր 8 և Արմավիր 6 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի և Ոսկեհատ գյուղի գլխավոր հատակագծերի նախագծերը /գոտևորման նախագծերը/ հաստատելու մասին ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ավագանու 26.04.2022թ. առաջին նստաշրջանի արտահերթ առաջին նիստի թիվ 80 որոշմամբ և Արմավիրի մարզպետի 19.05.2022թ. թիվ ՄՊ/344-2022 որոշմամբ հաստատված հատակագծում:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| Հ/ՀԱզգանուն Անուն | Կողմ | Դեմ | Ձեռնպահ | Հ/ՀԱզգանուն Անուն | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1. Արսեն Պետրոսյան | [signature] | | | 9. Աննա Կիրակոսյան | [signature] | | |

2. Նաիրա Բասենցյան ______ ______ ______

3. Գևորգ Ղազարյան ______ ______ ______

4. Լիլիթ Միրզախանյան ______ ______ ______

5. Ներսես Մելիքյան ______ ______ ______

6. Վարդան Գրիգորյան ______ ______ ______

7. Կարեն Մովսիսյան ______ ______ ______

8. Գոհար Նիկողոսյան ______ ______ ______

10. Աղասի Բաղդասարյան ______ ______ ______

11. Սեակ Խաչատրյան ______ ______ ______

12. Վահրամ Ղարիբջանյան ______ ______ ______

13. Նորայր Օհանյան ______ ______ ______

14. Էդգար Թամազյան ______ ______ ______

15. Արմեն Դավթյան ______ ______ ______

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՓՈԽԱՐԻՆՈՂ,
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**Ա Ր Մ Ա Վ Ի Ր Ի  Մ Ա Ր Զ Պ Ե Տ**

«27» «-----01-----» 2025թ.

N 01/7/00604-2025
ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ ԴԻԱՆԱ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր՝ 30.12.2024թ. N 6569 գրության

Հարգելի տիկին Գասպարյան,

Կից ներկայացնում եմ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 24.01.2025թ. N 01/11.3/971-2025 գրությունը՝ ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Կարճիկյան փողոցի թիվ 2 հասցեում գտնվող «ԼՈՒՍԻՆԵ-ԿԻԼԻԿԻԱ» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող 04-002-0874-0001 կադաստրային ծածկագրով 0,8474 հա մակերեսով հողամասը, բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման նպատակով, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական օբյեկտների նշանակության՝ արդյունաբերական օբյեկտների հողերից բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողերի փոխելու առաջարկության վերաբերյալ, քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի անդամների կարծիքների ամփոփ տեղեկանքն ու դրական եզրակացությունը:

Առդիր՝ էլեկտրոնային նյութ:

X

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ԱՐԳԻՇՏԻ ՄԵԽԱԿՅԱՆ

Քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների
կառավարման վարչության պետ Դավիթ Ավետիսյան
Կատարող՝ վարչության գլխավոր ինժեներ՝
Խորեն Սարուխանյան
Հեռ՝ / 077 092 082 /

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 2/փ - 24

*հերթական համարը*

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

*ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքը (Էջմիածին քաղաքը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխության վերաբերյալ*

*(Վաղարշապատ համայնքի (Էջմիածին քաղաքի) գոտևորման նախագծի մասով)*

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 49-րդ կետերի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝

*ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքը (Էջմիածին քաղաքը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Արմավիր-6 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխությանը՝*

| ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի (Էջմիածին քաղաքի)<br>Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը | Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը |
|---|---|
| 04-002-0874-0001 կադաստրային ծածկագրով 0,8474 հա մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական օբյեկտների նշանակության՝ արդյունաբերական օբյեկտների հողեր | 04-002-0874-0001 կադաստրային ծածկագրով 0,8474 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողեր |

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. Վաղարշապատ համայնքի ղեկավարին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել Էջմիածին քաղաքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի (Էջմիածին քաղաքի) հաստատված գոտևորման նախագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

*Հանձնաժողովի նախագահ՝* Ե. Վարդանյան

*Հանձնաժողովի քարտուղար՝*
*Ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի աշխատանքային պարտականությունները կատարող* Լ. Սարգսյան

Երևան, «22» «հունվարի» 2025 թ.

PRODUCED BY AN AUTODESK EDUCATIONAL PRODUCT

ՓՈՓՈԽՄԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ /ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ/ ՍԽԵՄԱ Մ 1:500

<<Համաձայնեցված է>>
Վաղարշապատ համայնքի ղեկավար՝
Դ. Գասպարյան




PRODUCED BY AN AUTODESK EDUCATIONAL PRODUCT
PRODUCED BY AN AUTODESK EDUCATIONAL PRODUCT

# ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

## ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՇԱՀԱԳՐԳԻՌ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

| | |
|---|---|
| 1. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն | 19-12-2024<br>01/14.3/39646-2024 |
| Հայտնում ենք, որ ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի վարչական տարածքում գտնվող, իրավաբանական անձի սեփականություն հանդիսացող 0.8474 հա (ծածկագիր՝ 04-002-0874-0001) մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողամասում նախարարության մասնագետի կողմից կատարած տեղազննության արդյունքում պարզվել է, որ պատմության և մշակույթի հուշարձաններ, ինչպես նաև հնագիտական օբյեկտների արտաքին նշաններ և հետքեր առկա չեն, ուստի լիազորված մարմինը չի առարկում վերոնշյալ հողամասի նպատակային նշանակության փոփոխությանը բնակավայրերի բնակելի կառուցապատման հողերի կատեգորիայի: Միաժամանակ հայտնում ենք, որ համաձայն ՀՀ կառավարության 2002 թ. ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի՝ «Հիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին»: | Ընդունվել է ի գիտություն |
| 2. ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն | 16-12-2024<br>Դխ/14.1/40647-2024 |
| ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Կարճիկյան փողոցի թիվ 2 հասցեում գտնվող «ԼՈՒՍԻՆԵ-ԿԻԼԻԿԻԱ» ՍՊ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող 04-002-0874-0001 կադաստրային ծածկագրով 0,8474 հա մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողամասը բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման նպատակով նպատակային և գործառնական նշանակությունը բնակավայրերի բնակելի կառուցապատման նշանակության հողամասի փոփոխելու առաջարկության վերաբերյալ առարկություններ չունի: | Ընդունվել է ի գիտություն |
| 3. ՀՀ առողջապահության նախարարություն | 17-12-2024 |

| | |
|---|---|
| | ԱԱ/04/37801-2024 |
| Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Կարճիկյան փողոցի թիվ 2 հասցեում գտնվող «ԼՈՒՍԻՆԵ-ԿԻԼԻԿԻԱ» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող 04-002-0874-0001 կադաստրային ծածկագրով 0,8474 հա մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողամասը՝ բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման նպատակով, նպատակային և գործառնական նշանակությունը բնակավայրերի բնակելի կառուցապատման նշանակության հողամասի փոփոխելու վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չկան: | Ընդունվել է ի գիտություն |
| 4. ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն | 13-12-2024<br>1/02.6/13757-2024 |
| Ի պատասխան Ձեր 2024 թվականի դեկտեմբերի 2-ի N01/11.6/18978 գրության՝ հայտնում եմ, որ շրջակա միջավայրի նախարարությունն Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Կարճիկյան փողոցի թիվ 2 հասցեում գտնվող, իրավաբանական անձի սեփականության իրավունքով պատկանող (04-002-0874-0001 կադաստրային ծածկագրով) 0,8474 հա մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողամասը՝ բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման նպատակով, բնակավայրերի բնակելի կառուցապատման նշանակության փոփոխելու վերաբերյալ առարկություններ չունի: Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8)-րդ կետի՝ նախատեսվող գործունեությունը ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության: | Ընդունվել է ի գիտություն |
| 5. ՀՀ էկոնոմիկայի նախարարություն | 04-12-2024<br>04/25035-2024 |
| Ի պատասխան Ձեր՝ ս. թ. դեկտեմբերի 2-ի N 01/11.6/18978-2024 գրության՝ ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքում գտնվող «ԼՈՒՍԻՆԵ-ԿԻԼԻԿԻԱ» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող 04-002-0874-0001 կադաստրային ծածկագրով 0,8474 հա մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողամասը՝ բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման նպատակով, նպատակային և գործառնական նշանակությունը բնակավայրերի բնակելի կառուցապատման նշանակության հողամասի փոփոխելու վերաբերյալ հայտնում ենք, որ ՀՀ էկոնոմիկայի նախարարությունն առարկություններ չունի: | Ընդունվել է ի գիտություն |
| | 09-12-2024 |

| | |
|---|---|
| 6. ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն | 01/11.1/10192-2024 |
| Ի պատասխան Ձեր 2024 թվականի դեկտեմբերի 2-ի թիվ 01/11.6/18978-2024 գրության՝ տեղեկացնում եմ, որ ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Կարճիկյան փողոցի թիվ 2 հասցեում գտնվող 04-002-0874-0001 կադաստրային ծածկագրով 0,8474 հա մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը փոխելու վերաբերյալ ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունն իր իրավասությունների շրջանակում առարկություններ չունի: Միաժամանակ, ներկայացվում են Հայաստանի Հանրապետությունում էլեկտրոնային հաղորդակցության ծառայություններ մատուցող ընկերությունների դիրքորոշումները, «Տելեկոմ Արմենիա» ԲԲ և «ՎԻՎԱ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲ ընկերությունների դիրքորոշումները արդեն առկա են Ձեր կողմից ներկայացված փաստաթղթերի փաթեթում: Առդիր՝ 1 խտացված նյութ: | Ընդունվել է ի գիտություն |
| 7. ՀՀ կադաստրի կոմիտե | 02-12-2024<br>ՍԹ/20665-2024 |
| Ձեր 2024 թվականի դեկտեմբերի 2-ի N 01/11.6/18978-2024 գրությամբ ներկայացված ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի Էջմիածին բնակավայրի գլխավոր հատակագծում փոփոխություն (0.8474 հա հողամասի նպատակային նշանակության փոփոխություն) կատարելու առաջարկության վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չունենք: | Ընդունվել է ի գիտություն |
| 8. ՀՀ ներքին գործերի նախարարություն | 06-12-2024<br>43/100/228945-24 |
| Ի պատասխան Ձեր 02.12.2024թ. թիվ 01/11.6/18978-2024 գրության՝ հայտնում եմ, որ ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Կարճիկյան փողոցի թիվ 2 հասցեում գտնվող «ԼՈՒՍԻՆԵ-ԿԻԼԻԿԻԱ» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող 04-002-0874-0001 կադաստրային ծածկագրով 0,8474 հա մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողամասը՝ բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման նպատակով, նպատակային և գործառնական նշանակությունը բնակավայրերի բնակելի կառուցապատման նշանակության հողամասի փոփոխելու վերաբերյալ Ներքին գործերի նախարարությունը դիտողություններ և առաջարկություններ չունի: Միաժամանակ հայտնում եմ, որ նշված տարածքում վտանգավոր բնական երևույթներ առկա չեն: | Ընդունվել է ի գիտություն |
| 9. Հայաստանի շինարարների միություն | |

| | |
|---|---|
| Սահմանված ժամկետում կարծիք չի ներկայացվել: | |
| 10. Ճարտարապետների պալատ | |
| Սահմանված ժամկետում կարծիք չի ներկայացվել: | |
| 11. Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմին | 09-12-2024<br>ՔՏՄ/13.4/37369-24 |
| Ի պատասխան ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Կարճիկյան փողոցի թիվ 2 հասցեում գտնվող «ԼՈՒՍԻՆԵ-ԿԻԼԻԿԻԱ» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող 04-002-0874-0001 կադաստրային ծածկագրով 0,8474 հա մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողամասը՝ բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման նպատակով, նպատակային և գործառնական նշանակությունը բնակավայրերի բնակելի կառուցապատման նշանակության հողամասի փոփոխելու վերաբերյալ թիվ 01/11.6/18978-2024 գրության՝ տեղեկացվում է, որ քննարկվող հողամասի հարևանությամբ գտնվող հողամասերը հանդիսանում են արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության հողամասեր, ուստի հակասում է ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2023 թվականի մայիսի 22-ի N 04-Ն հրամանի ՀՀՇՆ30-01-2023 «Քաղաքաշինություն, քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» ՀՀ շինարարական նորմերի 120-րդ կետին: | |
| Ի պատասխան թիվ 01/11.3/564-2025 գրության՝ տեղեկացվում է, որ ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Կարճիկյան փողոցի թիվ 2 հասցեում գտնվող «ԼՈՒՍԻՆԵ-ԿԻԼԻԿԻԱ» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող 04-002-0874-0001 կադաստրային ծածկագրով 0,8474 հա մակերեսով հողամասը, բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման նպատակով, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական օբյեկտների նշանակության՝ արդյունաբերական օբյեկտների հողերից բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողերի փոխելու լրամշակված առաջարկության վերաբերյալ տեսչական մարմինն առարկություններ չունի: | 20-01-2024<br>ՔՏՄ/13.2/2194-25<br>Ընդունվել է ի գիտություն |

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

## Ն Ա Խ Ա Գ Ա Հ

0010, ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3
www.minurban.am, E-mail: info@minurban.am

------------------------- N -------------------------------------

ՀՀ Արմավիրի մարզպետ
պարոն Արգիշտի ՄԵԽԱԿՅԱՆԻՆ

2025 թվականի հունվարի 8-ի
N 01/7/00066-2025 գրություն

Հարգելի պարոն Մեխակյան

Ձեզ եմ տրամադրում ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Կարճիկյան փողոցի թիվ 2 հասցեում գտնվող «ԼՈՒՍԻՆԵ-ԿԻԼԻԿԻԱ» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող 04-002-0874-0001 կադաստրային ծածկագրով 0,8474 հա մակերեսով հողամասը, բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման նպատակով, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական օբյեկտների նշանակության՝ արդյունաբերական օբյեկտների հողերից բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողերի փոխելու առաջարկության վերաբերյալ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի անդամների կարծիքների ամփոփ տեղեկանքն ու դրական եզրակացությունը:

Հիմք ընդունելով «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14.3 հոդվածի 30-րդ մասի պահանջները՝ նշված փոփոխությունն անհրաժեշտ է արտացոլել համայնքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի գլխավոր հատակագծում սույն որոշումից բխող դրույթների փոփոխությունները և գլխավոր հատակագծի վերը նշված փոփոխությունը հաստատելու մասին համայնքի ավագանու որոշման քաղվածքը ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում տրամադրել մեզ:

Առդիր՝ 2 ֆայլ:

Հարգանքով՝

23.01.2025

X

ԵՂԻԱԶԱՐ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Signed by: VARDANYAN YEGHIAZAR 2614790133 Եղիազար ՎԱՐԴԱՆՅԱՆ

Ճարտարապետության և քաղաքաշինության վարչություն,
Կատարող խորհրդական Սամվել Աֆյան, հեռախոս՝ 011 621 746

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 17-Ա

«28» փետրվարի 2025թ. ք.Էջմիածին

## ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի N 1325-Ն որոշմամբ և հիմք ընդունելով 2025 թվականի հունվարի 23-ին «Լուսինե-Կիլիկիա» ՍՊԸ-ի, ի դեմս տնօրեն Խաչատուր Հովհաննիսյանի կողմից Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Կարճիկյան փողոցի թիվ 2 հասցեում նախատեսվող 1 ստորգետնյա 12 վերգետնյա հարկերով բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման նախագծային փաստաթղթերի վերաբերյալ հանրային քննարկման արձանագրությունը և համայնքի ղեկավարի առաջին տեղակալի առաջարկությունը՝

**Համայնքի ավագանին**

## ՈՐՈՇՈՒՄ Է

1. «Լուսինե-Կիլիկիա» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող /ՀՀ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 30092024-04-0068, տրված 30.09.2024թ./ Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Կարճիկյան փողոցի թիվ 2 հասցեում նախատեսվող 1 ստորգետնյա 12 վերգետնյա հարկերով բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման համար տալ նախնական համաձայնություն:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| Հ/Հ Ազգանուն Անուն | Կողմ | Դեմ | Ձեռնպահ | Հ/Հ Ազգանուն Անուն | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1. Արսեն Պետրոսյան | | | | 9. Աննա Կիրակոսյան | | | |
| 2. Նաիրա Բասենցյան | | | | 10. Աղասի Բաղդասարյան | | | |
| 3. Գևորգ Ղազարյան | | | | 11. Սևակ Խաչատրյան | | | |
| 4. Լիլիթ Միրզախանյան | | | | 12. Վահրամ Ղարիբջանյան | | | |
| 5. Ներսես Մելիքյան | | | | 13. Նորայր Օհանյան | | | |

6. Վարդան Գրիգորյան ______ ______ 14. Էդգար Թամազյան

7. Կարեն Մովսիսյան ______ ______ 15. Արմեն Դավթյան

8. Գոհար Նիկողոսյան ______ ______

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ,
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ

# ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ք. Էջմիածին

23 հունվարի 2025թ.
ժամը 11:00-ին

2025 թվականի հունվարի 23-ին Վաղարշապատի համայնքապետարանի վարչական շենքում կայացավ ք.Էջմիածին Կարճիկյան փողոց թիվ 2 հասցեում նախատեսվող 1 ստորգետնյա 12 վերգետնյա հարկերով բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման նախագծային փաստաթղթերի վերաբերյալ հանրային քննարկում:

**Ելույթներ.**

**Ս. Աղաջանյան** - Բացման խոսքով հանդես եկավ քաղաքաշինության և հողաշինության բաժնի գլխավոր մասնագետ Սոնա Աղաջանյանը:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի և ՀՀ Կառավարության 19.11.2014 թվականի թիվ 1325-Ն որոշմամբ սահմանված կարգով, 2025 թվականի հունվարի 23-ին՝ ժամը 11-ին, Վաղարշապատի համայնքապետարանի դահլիճում անցկացվում է «Լուսինե-Կիլիկիա» ՍՊԸ-ին պատկանող Վաղարշապատ համայնք, ք.Էջմիածին Կարճիկյան փողոց թիվ 2 հասցեում նախատեսվող 1 ստորգետնյա 12 վերգետնյա հարկերով բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման նախագծային փաստաթղթերի վերաբերյալ հանրային քննարկման 1-ին փուլը: Առավել մանրամասն կներկայացնի նախագծի ճարտարապետ Արա Մարտիրոսյանը ;»- ներկայացրեց Ս. Աղաջանյանը:

**Ա. Մարտիրոսյան** - Նախագծի ճարտարպետ Ա.Մարտիրոսյանը ներկայացրեց, որ 8474քմ տարածքում նախատեսում են կառուցել բազմաբնակարան բնակելի շենք 1 ստորգետնյա 12 վերգետնյա հարկերով: «Վերգետնյա առաջին հարկը իրենից ներկայացնում է հասարակական սպասարկման տարածք (խանութներ,գրասենյակային տարածքներ,մանկական ժամանցի կենտրոններ և այլն):Նախագիծը իրենից ներկայացնում է երկու շենք, բաղկացած է հինգ մասնաշենքից: 1-ին և 2-րդ մասնաշենքը միացված են իրար, իսկ 3-րդից 5-րդ մասնաշենքերը իրար: Քաղաքաշինության նորմերը պահպանելով շենքը արտաքին տեսքով և նյութերով նման են հարակից նորակառույց շենքերին. որպեսզի կառույցները դառնան համալիր շինություններ:

Բազմաբնակարան շենքում նախատեսվում է կառուցել 358 բնակարան, բնակարանները սկսվում են 66քմ-ից մինչև 147քմ: Մշակվել է յուրօրինակ բակային համակարգ՝ տեսանելիությունը դեպի հարավ, պարզ տեսանելիությամբ դեպի Արարատ լեռը: Բակային տարածքում կառուցվելու են զբոսարաններ, խաղահրապարակներ, ֆուտբոլի դաշտ: Յուրաքանչյուր մասնաշենք ներառում է երկու վերելակ՝ բեռնատար և մարդատար: Շենքի արտաքին տեսքը երեսպատված է լինելու բազալտե սալիկներով, իսկ ճակատային հատվածը՝ կոմպոզիտ նյութերով: Բոլոր բնակարանների համար նախատեսվում է տեղադրել անհատական կաթսաներ: Կաթսաները տեղադրվելու են արտաքին պատերի վրա՝ քողարկված: Բոլոր բնակարանները ունեն պատշգամբ:

Ավտոկայանատեղի համար նախատեսվում է 1 ստորգետնյա հարկ, քանի որ տեղանքի գրունտային ջրերի բարձր մակարդակով պայմանավորված հնարավոր չէ 1-ից ավել ստորգետնյա հարկերի կառուցումը: Ավտոկայանատեղին նախատեսված է 75 ավտոմեքենայի համար:

Ստորգետնյա հարկում առկա է լինելու պոմպակայան, ինչպես նաև կենցաղային և խմելու ջրի համար նախատեսվում է 2 տարբեր բաքեր: Ստորգետնյա հարկը դիտարկվում է նաև որպես ապաստարան, ապահովված է լինելու սանհանգույցով: Շենքը սեսմակայուն է, համապատասխանում է բոլոր նորմերին, կայունությունը հաշվարկված է 9 - բալի հաշվարկով:

Տարածքի կանաչապատման տոկոսը համապատասխանում է բոլոր նորմերին:

**Հարց ու պատասխան.**

Արդյո՞ք ավտոմեքենաների կայանատեղին բավարար քանակով կկարողանա սպասարկել բնակիչներին:

Նախագծի զեկուցող Ա.Մարտիրոսյանը հայտնեց, որ դրսում նույնպես կայանատեղի կլինի, որը կկարողանա ապահովել բնակիչների ավտոմեքենաների կայանումը առանց որևէ խնդրի:

**Հավելյալ հարցերի բացակայության հիմքով հանրային քննարկումն ավարտվեց:**

**<u>Որոշում.</u>**

Ամփոփելով հանրային քննարկումը՝ մասնակիցները հավանության արժանացրին ք.Էջմիածին Կարճիկյան փողոց թիվ 2 հասցեում նախատեսվող 1 ստորգետնյա 12 վերգետնյա հարկերով բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման նախագծային փաստաթղթերը: Որոշվեց այն ներկայացնել ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ավագանու հաստատմանը:

**Ձեռնարկող՝** **Վաղարշապատի համայնքապետարան**

**Քննարկման վարող՝** Ս. Աղաջանյան

**Արձանագրող՝** Մ. Պողոսյան

Արձանագրությանը կցված է հանրային քննարկման մասնակիցների ցանկը՝ համապատասխան ստորագրություններով:

# ՑԱՆԿ

Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաք Կարմիրյան փողոց թիվ 2 հասցեում նախատեսվող 1 ստորգետնյա 12 վերգետնյա հարկերով բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման նախագծային փաստաթղթերի վերաբերյալ հանրային քննարկման մասնակիցների

| | Անուն ազգանուն | Հեռախոսահամար | Էլեկտրոնային հասցե | Ստորագրություն |
|---|---|---|---|---|
| 1. | [illegible] | 091-27-67-76 | axajanyan.30ra@mail.ru | [signature] |
| 2. | Հայրապետ Համբարձումյան | 041 40 40 70 | 71298221@mail.ru | [signature] |
| 3. | Թարաշյան Գ.Տ. | 077 789 086 | vinilus design@yandex.ru | [signature] |
| 4. | Արթուր Սիմոնյան | 099991155 | Չունեմ | [signature] |
| 5. | Արամ Բաղդասարյան | 091408199 | azamat/rossian@mail.ru | [signature] |
| 6. | Սիրանուշ Գևորգյան | 098123438 | gevorgian.siranush@mail.ru | [signature] |
| 7. | Մարիամ Զաքարյան | 094539361 | marrijamzakaryan55@mail.ru | [signature] |
| 8. | Մարիամ Պողոսյան | 096469050 | poghosyan.m1991@gmail.com | [signature] |
| 9. | | | | |
| 10. | | | | |
| 11. | | | | |
| 12. | | | | |
| 13. | | | | |
| 14. | | | | |
| 15. | | | | |
| 16. | | | | |
| 17. | | | | |
| 18. | | | | |
| 19. | | | | |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

# ՎԿԱՅԱԿԱՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ

Կադաստրի կոմիտե

Սույն վկայականով հաստատվում է 30 սեպտեմբերի 2024 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

## 1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ(ՆԵՐ)

«ԼՈՒՍԻՆԵ-ԿԻԼԻԿԻԱ» ՍՊԸ

## 2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Մարզ Արմավիր, համայնք Վաղարշապատ Էջմիածին ք. Կարճիկյան փողոց 2

## 3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Մասնավորեցման պայմանագիր 04/03/2005թ սմ 1234, Համայնքի ղեկավարի N 522-Ա որոշում 24/03/2023թ

## 4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝ 04-002-0874-0001
Մակերեսի չափը (հա)՝ 0.8474
Նպատակային նշանակությունը՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության
Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Արդյունաբերական օբյեկտների
Գրանցված իրավունքի տեսակը՝ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

**ՎԿԱՅԱԿԱՆ N 30092024-04-0068, գաղտնաբառ՝ UTI4JAGXQAUP**

*Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով*

## 5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

1) Նպատակային նշանակությունը՝ արտադրական

2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

| Հ/Հ | Կադաստրային ծածկագիր | Տեսակ | Մակերես | Գրանցված իրավունքի տեսակ |
|---|---|---|---|---|
| 1 | 04-002-0874-0001-001 | Գրասենյակ | 301.1 քմ | ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ |
| 2 | 04-002-0874-0001-002 | Պահեստ | 115.1 քմ | ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ |
| 3 | 04-002-0874-0001-003 | Ավտոտնակներ | 303.62 քմ | ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ |
| 4 | 04-002-0874-0001-005 | Դարբնոց | 29.6 քմ | ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ |
| 5 | 04-002-0874-0001-006 | Պահակատուն | 9 քմ | ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ |
| 6 | 04-002-0874-0001-008 | Արհեստանոց | 354.8 քմ | ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ |
| 7 | 04-002-0874-0001-009 | Պահեստ | 290.6 քմ | ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ |
| 8 | 04-002-0874-0001-016 | պարիսպ | 0.6 քմ, 1.5 խ.մ. | ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ |

## Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

առկա են ինքնակամ շինություններ 928.1 քմ մակերեսով: Հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը փոխանցված է 04/10/2005թ. N199-Ն ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի պահանջների համաձայն պայմանով՝ գույքի հետագա օտարման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումը կկատարվի վճարման պահին գործող հողամասի կադաստրային արժեքի վճարման անդորրագիրը ներկայացվելու դեպքում:

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ ՎԱԼԵՐԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

Զբաղեցրած պաշտոնը՝ Անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման անշարժ գույքի ավագ ռեգիստր

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 18-Ա

«28» փետրվարի 2025թ. ք.Էջմիածին

### ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի և 64-րդ հոդվածի 2-րդ մասի, 57-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի պահանջներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի «գ» ենթակետով և 22-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջին տեղակալի առաջարկությունը

**Համայնքի ավագանին**

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Աճուրդային եղանակով վաճառել Վաղարշապատ համայնքի սեփականությունը հանդիսացող (հիմք՝ ՀՀ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 17012025-04-0039, տրված 17.01.2025թ.) ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Էջմիածին-Աշտարակ խճուղի 21/1 հասցեում գտնվող 0.0198 հա մակերեսով (կադաստրային ծածկագիր՝ 04-002-0202-0062) բնակավայրերի նպատակային նշանակության խառը կառուցապատման գործառնական նշանակության հողամասը:
2.Հողամասի աճուրդային գինը սահմանել՝ տվյալ հողի կադաստրային արժեքի 100%-ի չափով:
3. Հողամասի աճուրդային քայլը սահմանել հողամասի մեկնարկային գնի 5% չափով:
4. Հողամասի աճուրդային եղանակով վաճառքն իրականացնել համայնքապետարանի «Աճուրդային հանձնաժողով» -ի միջոցով:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| Հ/Հ Ազգանուն Անուն | Կողմ | Դեմ | Ձեռնպահ | Հ/Հ Ազգանուն Անուն | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1. Արսեն Պետրոսյան | | | | 9. Հրայր Ավետիսյան | | | |
| 2. Նաիրա Բասենցյան | | | | 10. Աննա Կիրակոսյան | | | |
| 3. Գևորգ Ղազարյան | | | | 11. Արասի Բաղդասարյան | | | |
| 4. Լիլիթ Միրզախանյան | | | | 12. Վահրամ Ղարիբջանյան | | | |
| 5. Ներսես Մելիքյան | | | | 13. Նորայր Օհանյան | | | |
| 6. Վարդան Գրիգորյան | | | | 14. Էդգար Թամազյան | | | |
| 7. Կարեն Մովսիսյան | | | | 15. Արմեն Դավթյան | | | |
| 8. Գոհար Նիկողոսյան | | | | | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՓՈԽԱՐԻՆՈՂ,
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

# ՎԿԱՅԱԿԱՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ

Կադաստրի
կոմիտե

Սույն վկայականով հաստատվում է 17 հունվարի 2025 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

## 1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ(ՆԵՐ)

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔ

## 2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Մարզ Արմավիր, համայնք Վաղարշապատ Էջմիածին ք. Էջմիածին-Աշտարակ խճուղի 21/1 հողամաս

## 3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

ՀՀ կառավարության 14.07.2005թ. թիվ 1109-Ն որոշում, Հասցե տրամադրելու մասին 25.12.2024թ. h. 2090-Ա որոշում

## 4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝ 04-002-0202-0062
Մակերեսի չափը (հա)՝ 0.0198
Նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի
Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ խառը կառուցապատման
Գրանցված իրավունքի տեսակը՝ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

**ՎԿԱՅԱԿԱՆ N 17012025-04-0039, գաղտնաբառ՝ 41NG2YL4YAP2**

*Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով*

## 5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

1) Նպատակային նշանակությունը՝

2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

| Հ/Հ | Կադաստրային ծածկագիր | Տեսակ | Մակերես | Գրանցված իրավունքի տեսակ |
|---|---|---|---|---|
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |

### Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ ՎԱԼԵՐԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ
Զբաղեցրած պաշտոնը՝ Անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման անշարժ գույքի ավագ ռեգիստր

ՎԿԱՅԱԿԱՆ N 17012025-04-0039, գաղտնաբառ՝ 41NG2YL4YAP2

PRODUCED BY AN AUTODESK EDUCATIONAL PRODUCT




PRODUCED BY AN AUTODESK EDUCATIONAL PRODUCT
PRODUCED BY AN AUTODESK EDUCATIONAL PRODUCT
PRODUCED BY AN AUTODESK EDUCATIONAL PRODUCT

## ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
## ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

### ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 19-Ա

«28» փետրվարի 2025թ. ք. Էջմիածին

### ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի, 57-րդ հոդվածի 2-րդ մասի, ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և նույն օրենսգրքի 7-րդ հոդվածի 9-րդ և 15-րդ մասերի, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14.3-րդ հոդվածի 9-րդ և 12-րդ մասերի պահանջներով և հիմք ընդունելով Համեստուհի Ստյոպայի Գրիգորյանի հայտը և համայնքի ղեկավարի առաջին տեղակալի առաջարկությունը`

**Համայնքի ավագանին**

### ՈՐՈՇՈՒՄ Է

1. Համեստուհի Ստյոպայի Գրիգորյանին (1/4), Հենրիկ Համբարձումի Ափոյանին (1/4), Գարիկ Հենրիկի Ափոյանին (1/4), Հասմիկ Օնիկի Սուքիասյանին (1/12), Արմեն Կարենի Ափոյանին (1/12) և Աննա Կարենի Ափոյանին (1/12) սեփականության իրավունքով պատկանող /ՀՀ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 19022025-04-0068, տրված 19.02.2025թ./ ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի տարածքում գտնվող 04-002-0397-0024 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նպատակային նշանակության, կորիզավոր 4-րդ կարգի հողատեսքի 0.509հա մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը փոփոխել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, գյուղատնտեսական արտադրական գործառնական նշանակության՝ ջերմոցային տնտեսություն կառուցելու համար:

2. «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14.3 հոդվածի 14-րդ և 30-րդ մասերով սահմանված կարգով հողամասի նպատակային նշանակության փոփոխությունը պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքի հողային ֆոնդի տարեկան ընթացիկ հաշվառման տվյալներում, համայնքի հողային հաշվեկշռում, արտացոլել համայնքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում:

3. Սույն որոշումից բխող դրույթների փոփոխությունը արտացոլել ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր 8 և Արմավիր 6 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի և Ոսկեհատ գյուղի գլխավոր հատակագծերի նախագծերը /գոտևորման նախագծերը/ հաստատելու մասին ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ավագանու 26.04.2022թ. առաջին նստաշրջանի

արտահերթ առաջին նիստի թիվ 80 որոշմամբ և Արմավիրի մարզպետի 19.05.2022թ. թիվ ՄՈ/344-2022 որոշմամբ հաստատված հատակագծում:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| Հ/Հ Ազգանուն Անուն | Կողմ | Դեմ | Ձեռնպահ | Հ/Հ Ազգանուն Անուն | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1. Արսեն Պետրոսյան | | | | 8. Գոհար Նիկողոսյան | | | |
| 2. Նաիրա Բասենցյան | | | | 9. Հրայր Ավետիսյան | | | |
| 3. Գևորգ Ղազարյան | | | | 10. Աննա Կիրակոսյան | | | |
| 4. Լիլիթ Միրզախանյան | | | | 11. Աղասի Բաղդասարյան | | | |
| 5. Ներսես Մելիքյան | | | | 12. Վահրամ Ղարիբջանյան | | | |
| 6. Վարդան Գրիգորյան | | | | 13. Էդգար Թամազյան | | | |
| 7. Կարեն Մովսիսյան | | | | 14. Արմեն Դավթյան | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՓՈԽԱՐԻՆՈՂ,
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Ձև N 1-1

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԻԱՆԱ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ

Համեստուհի Գրիգորյանից

ՀՀ, Արմավիր, Վաղարշապատ, Վաղարշապատ, Այվազովսկու փ., 0

+37477-025-270, qnqush99@inbox.ru

# Հ Ա Յ Տ
# ՃՀԱ/400/6316-25

Խնդրում եմ տալ նախագծման թույլտվություն (ճարտարապետահատակագծային առաջադրանք)

Կառուցում (ջերմոցների կառուցում) արդյունաբերության ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության գյուղ արտադրական

Նախագծման համար Մարզ Արմավիր, համայնք Վաղարշապատ Էջմիածին թ., 04-002-0397-0024 գտնվող հողամասում

ինչպես նաև ինժեներական ցանցերին միանալու տեխնիկական պայմանները (լրացվում է, եթե կառուցապատվող օբյեկտի համար առաջանում է ինժեներական ենթակառուցվածքի նոր ծառայությունների մատուցման կամ ծառայությունների մատուցման փոփոխության անհրաժեշտություն)

1. Նախատեսում եմ արդյունաբերության ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության գյուղ արտադրական, ջերմոց 1 40x15.8 ջերմոց 2 22.5x15.8, ջերմոց 1 632 քմ ջերմոց 2 355,5քմ

2. Կից ներկայացնում եմ՝

1) տեղագրական հանույթի վրա կառուցապատվող հողամասի հատակագիծը (սխեման)՝ նախագծվող օբյեկտի առաջարկվող տեղանշմամբ   կցված է

2) կառույցի գործառնական նշանակության փոփոխության դեպքում՝ նաև վերջինիս հատակագիծը (հատակագծերը).

3) անշարժ գույքի նկատմամբ սեփականության կամ օգտագործողի՝ անշարժ գույքը փոփոխելու իրավունքը հաստատող փաստաթղթի պատճենը։

Կառուցապատող՝ ____________ Հ. Գրիգորյան ____________

20.02.2025թ.

ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ Մ 1:2000



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Կադաստրի կոմիտե

# ՎԿԱՅԱԿԱՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ

Սույն վկայականով հաստատվում է 19 փետրվարի 2025 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

## 1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ(ՆԵՐ)

ՀԱՄԵՍՏՈՒՀԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՏՅՈՊԱՅԻ (1/4), ՀԵՆՐԻԿ ԱՓՈՅԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԻ (1/4), ԳԱՐԻԿ ԱՓՈՅԱՆ ՀԵՆՐԻԿԻ (1/4), ՀԱՍՄԻԿ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ ՕՆԻԿԻ (1/12), ԱՐՄԵՆ ԱՓՈՅԱՆ ԿԱՐԵՆԻ (1/12), ԱՆՆԱ ԱՓՈՅԱՆ ԿԱՐԵՆԻ (1/12)

## 2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Մարզ Արմավիր, համայնք Վաղարշապատ Էջմիածին ք.

## 3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Հողային բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովի 12.03.1991թ. թիվ 3 որոշումից քաղվածք, Համայնքի ղեկավարի 14.02.2025թ. թիվ 136Ա որոշում, Ժառանգության իրավունքի 09.12.2021թ. թիվ 6896, թիվ 6897, թիվ 6898 վկայագիր ըստ օրենքի

## 4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝ 04-002-0397-0024
Մակերեսի չափը (հա)՝ 0.509
Նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական
Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Կորիզավոր
Գրանցված իրավունքի տեսակը՝ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ N 19022025-04-0068, գաղտնաբառ՝ F7CBCXRNFJRY

*Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով*

## 5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

1) Նպատակային նշանակությունը

2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

| Հ/Հ | Կադաստրային ծածկագիր | Տեսակ | Մակերես | Գրանցված իրավունքի տեսակ |
|---|---|---|---|---|
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |

## Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ ԿԱՐԻՆԱ ՀԱԿՈԲՅԱՆ

Զբաղեցրած պաշտոնը՝ Անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման անշարժ գույքի ավագ ռեգիստր

ՎԿԱՅԱԿԱՆ N 19022025-04-0068, գաղտնաբառ՝ F7CBCXRNFJRY

## ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
## ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

### ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 20-Ա

«28» փետրվարի 2025թ. ք. Էջմիածին

### ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի, 57-րդ հոդվածի 2-րդ մասի, ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և նույն օրենսգրքի 7-րդ հոդվածի 9-րդ և 15-րդ մասերի, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14.3-րդ հոդվածի 9-րդ և 12-րդ մասերի պահանջներով և հիմք ընդունելով Նելի Բորիսի Այվազյանի հայտը և համայնքի ղեկավարի առաջին տեղակալի առաջարկությունը՝

**Համայնքի ավագանին**

### ՈՐՈՇՈՒՄ Է

1. Նելի Բորիսի Այվազյանին սեփականության իրավունքով պատկանող /ՀՀ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 26122024-04-0055, տրված 26.12.2024թ./ ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի տարածքում գտնվող 04-002-0339-0016 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նպատակային նշանակության, խաղողի այգի 3-րդ կարգի հողատեսքի, 0.6731հա մակերեսով հողամասից մի մասի՝ 0,3141 մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը փոփոխել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, գյուղատնտեսական արտադրական գործառնական նշանակության ջերմոցային տնտեսություն կառուցելու համար:

2. «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14.3 հոդվածի 14-րդ և 30-րդ մասերով սահմանված կարգով հողամասի նպատակային նշանակության փոփոխությունը պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքի հողային ֆոնդի տարեկան ընթացիկ հաշվառման տվյալներում, համայնքի հողային հաշվեկշռում, արտացոլել համայնքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում:

3. Սույն որոշումից բխող դրույթների փոփոխությունը արտացոլել ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր 8 և Արմավիր 6 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի և Ոսկեհատ գյուղի գլխավոր հատակագծերի նախագծերը /գոտևորման նախագծերը/ հաստատելու մասին ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ավագանու 26.04.2022թ. առաջին նստաշրջանի արտահերթ առաջին նիստի թիվ 80 որոշմամբ և Արմավիրի մարզպետի 19.05.2022թ. թիվ ՄՈ/344-2022 որոշմամբ հաստատված հատակագծում:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| Հ/Հ Ազգանուն Անուն | Կողմ | Դեմ | Ձեռնպահ | Հ/Հ Ազգանուն Անուն | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1. Արսեն Պետրոսյան | | | | 8. Գոհար Նիկողոսյան | | | |
| 2. Նաիրա Բասենցյան | | | | 9. Հրայսյա Ավետիսյան | | | |

| | |
|---|---|
| 3. Գնորգ Ղազարյան | 10. Աննա Կիրակոսյան |
| 4. Լիլիթ Միրզախանյան | 11. Աղասի Բաղդասարյան |
| 5. Ներսես Մելիքյան | 12. Վահրամ Ղարիբջանյան |
| 6. Վարդան Գրիգորյան | 13. Էդգար Թամազյան |
| 7. Կարեն Մովսիսյան | 14. Արմեն Դավթյան |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԱՐԻ ՓՈԽԱՐԻՆՈՂ,
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Ձև N 1-1

**ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԻԱՆԱ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ**

Նելի Այվազյանից

([illegible])

ՀՀ, Շիրակ, Անի, Մարալիկ, Կոլտնտեսականների փ., 2

(բնակության վայրը)

[object Object], qnqush99@inbox.ru

(հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն)

**Հ Ա Յ Տ**
**ՃՀԱ/400/4195-25**

**Խնդրում եմ տալ նախագծման թույլտվություն** (Ճարտարապետահատակագծային առաջադրանք)

**Կառուցում (ջերմոցի կառուցում) արդյունաբերության ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության գյուղ արտադրական**

([illegible])

**Նախագծման համար** Մարզ Արմավիր, համայնք Վաղարշապատ Էջմիածին ք., 04-002-0339-0016 **գտնվող հողամասում**

([illegible])

**ինչպես նաև ինժեներական ցանցերին միանալու տեխնիկական պայմանները**
(լրացվում է, եթե կառուցապատվող օբյեկտի համար առաջանում է ինժեներական ենթակառուցվածքի նոր ծառայությունների մատուցման կամ ծառայությունների մատուցման փոփոխության անհրաժեշտություն)

([illegible])

**1. Նախատեսում եմ** արդյունաբերության ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության գյուղ արտադրական, ջերմոց 65.0x48.1, ջերմոց 3126.5

([illegible])

**2. Կից ներկայացնում եմ**

1) տեղագրական հանույթի վրա կառուցապատվող հողամասի հատակագիծը (սխեման)՝ նախագծվող օբյեկտի առաջարկվող տեղանշմամբ **կցված է**

([illegible])

2) կառույցի գործառնական նշանակության փոփոխության դեպքում՝ նաև վերջինիս հատակագիծը (հատակագծերը).

3) անշարժ գույքի նկատմամբ սեփականության կամ օգտագործողի՝ անշարժ գույքը փոփոխելու իրավունքը հաստատող փաստաթղթի պատճենը:

**Կառուցապատող՝** ______________ Ն. Այվազյան

(պաշտոնը, ստորագրությունը, անունը, ազգանունը)

06.02.2025թ.

ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ Մ 1: 2000



# ՎԿԱՅԱԿԱՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ

Կադաստրի կոմիտե

Սույն վկայականով հավաստվում է 26 դեկտեմբերի 2024 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

## 1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ(ՆԵՐ)

ՆԵԼԻ ԱՍՎԱԾՅԱՆ ԲՈՐԻՍԻ

## 2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Մարզ Արմավիր, համայնք Վաղարշապատ Էջմիածին ք.

## 3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր 16.10.2024թ. N 7877, Նվիրատվության 05.12.2024թ. թիվ 6832 պայմանագիր ,Սեփականության իրավունքի վկայագիր կնքված 05/12/2024թ. սմ.-6821, , Անշարժ գույքի բաժնեմասի նվիրատվության պայմանագիր կնքված 05/12/2024թ. սմ.-6822,գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին << օրենքի 46 հոդված

## 4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝ 04-002-0339-0016
Մակերեսի չափը (հա)՝ 0.6731
Նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական
Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ խաղող
Գրանցված իրավունքի տեսակը՝ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ N 26122024-04-0055, գաղտնաբառ՝ 8GQAPYPDCS39

*Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով*

## 5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

1) Նպատակային նշանակությունը՝

2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

| Հ/Հ | Կադաստրային ծածկագիր | Տեսակ | Մակերես | Գրանցված իրավունքի տեսակ |
|---|---|---|---|---|
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ ԳՐԻԳՈՐԻ ԲԵԺԱՆՅԱՆ

Զբաղեցրած պաշտոնը՝ Անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման անշարժ գույքի ավագ ռեգիստր

ՎԿԱՅԱԿԱՆ N 26122024-04-0055, գաղտնաբառ՝ BGQAPYPDCS39

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 21-Ա

«28» փետրվարի 2025թ. ք. Էջմիածին

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ 6 ՄԻԿՐՈՌԵԳԻՈՆԱԼ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ՀԱՏԱԿԱԳԾԵՐՈՒՄ ԳՈՏԵՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ ՄՇԱԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 29-րդ մասով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով, «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի $14^{3}$–րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ և հիմք ընդունելով աշխատակազմի քաղաքաշինություն և հողաշինության բաժնի պետի զեկուցագիրը և համայնքի ղեկավարի առաջին տեղակալի առաջարկը.

Համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Համաձայնություն տալ ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր 6 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերում գոտևորման նախագծի և հողամասերի նպատակային նշանակության փոփոխությունների առաջարկը մշակելու գործընթացի համար։
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից։

| Հ/Հ Ազգանուն Անուն | Կողմ | Դեմ | Ձեռնպահ | Հ/Հ Ազգանուն Անուն | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1. Արսեն Պետրոսյան | [signature] | | | 8. Գոհար Նիկողոսյան | [signature] | | |
| 2. Նաիրա Բասենցյան | [signature] | | | 9. Հրայր Ավետիսյան | [signature] | | |
| 3. Գևորգ Ղազարյան | [signature] | | | 10. Աննա Կիրակոսյան | [signature] | | |
| 4. Լիլիթ Միրզախանյան | [signature] | | | 11. Աղասի Բաղդասարյան | [signature] | | |
| 5. Ներսես Մելիքյան | [signature] | | | 12. Վահրամ Ղարիբջանյան | [signature] | | |
| 6. Վարդան Գրիգորյան | [signature] | | | 13. Էդգար Թամազյան | [signature] | | |
| 7. Կարեն Մովսիսյան | [signature] | | | 14. Արմեն Դավթյան | [signature] | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԱՌԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ

ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Նյութ. քաղ. բաժին
Կ. Հակոբյանին
Ա. Պետրոսյան

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՓՈԽԱՐԻՆՈՂ,
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ

ԶԵԿՈՒՑԱԳԻՐ

Հարգելի՛ պարոն Պետրոսյան,

Համայնքի վարչական սահմաններում քաղաքաշինական գործունեությունը կանոնակարգվում է համայնքի գլխավոր հատակագծով, քաղաքաշինական գոտևորման նախագծով, ինչպես նաև համակցված տարածական պլանավորման փաստաթղթով ։

Գոտևորման նախագիծը, հանդիսանալով քաղաքաշինական ծրագրային փաստաթուղթ սահմանում է համայնքի տարածական զարգացման մանրամասն պայմանները՝ համայնքում ընդգրկված բնակավայրերի տարածքների փաստացի և հեռանկարային օգտագործման ու կառուցապատման նկատմամբ պարտադիր պահանջներն ու սահմանափակումները՝ կենսագործունեության բարենպաստ միջավայրի ձևավորման նպատակով:

Գոտևորման նախագծի դրույթները հիմք են հանդիսանում քաղաքաշինական նպատակներով հողամասերի և (կամ) ճարտարապետահատակագծային առաջադրանքների տրամադրման, շենքերի ու շինությունների նախագծային փաստաթղթերի մշակման ու շինարարության թույլտվության համար:

Որպես առանձին փաստաթուղթ մշակվող գոտևորման նախագծի առաջադրանքը մշակվում է համայնքի ղեկավարի կողմից կազմված և համայնքի ավագանու կողմից սահմանված կարգով հաստատված նախագծման առաջադրանքի հիման վրա, համայնքի ղեկավարի պատվերով՝ քաղաքաշինական փաստաթղթերի մշակման իրավունք ունեցող անձանց հետ կնքված նախագծային կապալի պայմանագրով:

Հաշվի առնելով վերոգրյալը և այն հանգամանքը, որ ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր 6 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի գլխավոր հատակագիծը ամբողջությամբ չի պարունակում քաղաքաշինական գոտևորման նախագիծ, առաջացել է անհրաժեշտություն փոփոխել ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր 6 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերը, մասնավորապես՝ նախատեսել Էջմիածին քաղաքի ամբողջ բնակավայրի գոտևորման հատակագծի նախագիծ և հողամասերի նպատակային նշանակության փոփոխություն՝ քաղաքի հետագա հեռանկարային զարգացման համար:

Հիմք ընդունելով վերոգրյալը անհրաժեշտ է ներկայացնել ավագանուն որոշման նախագիծ՝ գոտևորման նախագծի և հողամասերի նպատակային նշանակության փոփոխությունների առաջադրանքները մշակելու համաձայնություն տալու մասին:

Հարգանքով՝

Աշխատակազմի քաղաքաշինություն և
հողաշինության բաժնի պետ Ռ.Մարտիրոսյան

## ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
## ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 22-Լ

«28» փետրվարի 2025թ. — ք. Էջմիածին

### ԻՐԱԿԱՆԱՑՐԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ԵՎ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ ՎԵՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 37-րդ կետի, 57-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով, հիմք ընդունելով Վաղարշապատի համայնքապետարանում ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի աշխատանքային խմբի կողմից Վաղարշապատ համայնքում 2024 թվականի չորրորդ եռամսյակում իրականացված իրավական հսկողության վերաբերյալ զեկուցագիրը և համայնքի ղեկավարի առաջին տեղակալի առաջարկությունը՝

**Համայնքի Ավագանին**

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Ընդունել ի գիտություն Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի աշխատանքային խմբի կողմից Վաղարշապատ համայնքում 2024 թվականի չորրորդ եռամսյակում իրականացված իրավական հսկողության արդյունքները և առաջարկել համայնքի ղեկավարին ձեռնարկել միջոցներ արձանագրված թերությունները և խախտումները վերացնելու և շտկելու համար:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| Հ/Հ Ազգանուն Անուն | Կողմ | Դեմ | Ձեռնպահ | Հ/Հ Ազգանուն Անուն | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1. Արսեն Պետրոսյան | [signature] | | | 8. Գոհար Նիկողոսյան | [signature] | | |
| 2. Նաիրա Բասենցյան | [signature] | | | 9. Հրայր Ավետիսյան | [signature] | | |
| 3. Գևորգ Ղազարյան | [signature] | | | 10. Աննա Կիրակոսյան | [signature] | | |
| 4. Լիլիթ Միրզախանյան | [signature] | | | 11. Աղասի Բաղդասարյան | [signature] | | |
| 5. Ներսես Մելիքյան | [signature] | | | 12. Վահրամ Ղարիբջանյան | [signature] | | |
| 6. Վարդան Գրիգորյան | [signature] | | | 13. Էդգար Թամազյան | [signature] | | |
| 7. Կարեն Մովսիսյան | [signature] | | | 14. Արմեն [illegible] | [signature] | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ — Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ